


22191



1897

Մարդաբանական գրադարան

№ 1.

Ը. ԼԵՏՈՒՐՆԸ

(21)

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

ԶԱՐԳԱՑՈՒՄՆ

Թարգ. Փրանս.

Ե. ԼԱԼԱՅԵԱՆ


Վ. Բ. Ա. Տ. Պ. Ա. Խ.

Ը Հ Գ Ա Վ Ր Ա Կ Ե Յ Հ Յ Ա Կ Ի Ւ Յ Յ

Թ. Ի. Փ. Լ. Հ. Ա.

Տարբան. Մ. Դ. Պոտիւլուսի լ. Տիպոգրաֆія Մ. Դ. Ռոտինան
Գօվա, պր., լ. № 41.

1897



392

L-45

Մարդաբանական գրադարան

№ 1.

300

1312-LG

Յ. ԼԵՏՈՒՐՆՈ

ԱՄՈՒՄՆՈՒԹԵԱՆ

ԶԱՐԳԱՑՈՒՄՆ

Թարգ. ֆրանս.

Ե. ԼԱԼԱՅԵԱՆ

ԱՐՏԱՍՊԱԾ

ԱԶԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻՑ



1003
11485

Թ Ի Փ Հ Ի Ս

Տպարան Մ. Դ. Ռոտինյանցի || Типографія М. Д. Ротиніанца,

Голов. пр., д. № 41.


1897

2002

2010

6440

Дозволено цензурою. Тифлисъ, 24 Февраля 1897 года.



Գրեատ

Միհեթառեան տպարտա

Մ. Լ. Տ Ո Ւ Ր Ա Յ Ո

M. LETOURNEAU

„Պազարական Հանդէս, Ա. Տարի, Ա. Դիբր:

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ

ԾԱՌ ՀԵՑՈՒՐԻՆԾ.

ԿԵՆՍԵԳԻ ԲԱԿԱՆ ԳԸՆՔ.

Ծարլ Լետուրնո, ֆրանսիացի հոչակատը լնկերաբանը, միջանասակ, խոժողակէս, քաղցրահայեաց մի ծերունիէ. սպիտակ ալիքներն արդէն ծածկել են նրա իմաստալից գլուխը: Նա ծնուել է 1831 թուի սեպտեմբերի 11/23-ին Առւրայ փոքրիկ քաղաքում, որ գտնում է Մորքիհոնի նահանգում, Բրիտոն թերակղզու վրայ: Նրա ծնողները ըրետոնական հին ցեղից էին, փոքրիկ վաճառականներ: Իւր «Mon évolution intellectuelle» գրքոյիկ մէջ Լետուրնո այսպէս է նկարագրում այն միջավայրը, որ անց է կացել նրա մանկութիւնն ու պատանեկութիւնը: «Իմ ծննդավայրիս բարոյական եւ մոռատը որութիւնն այն ժամանակ ժե կամ ժամանարի որութեան մէջն էր. ժողովուրդը սաստիկ կըօնամուէր, եկեղեցու զանգն էր կարգաւորում ամէն բան եւ նախապաշտումներն ու հրաշքները կլանում մեր ամրող իմա-

ցականութիւնը»: Իւր սկզբնական կրթութիւնը վերջացնելով Մորբինին ահանգի Վանն (Vannes) քաղաքու՛, Լետուրնո արդէն 21 տարեկան եկել է Փարիզ՝ սժշկութիւն սովորելու: Իւր ինձ տուած կենսագրական տեղեկութիւնների մէջ Լետուրնո սաստիկ գանգատում է սժշկական դպրոցի այն ժամանակուայ դրութեան մասին՝ դասախոսութիւնները շատ անբասարար էին, լաբորատուարներ չկային, ուղղութիւն տուածներ պակասում էին: Այս ամենի վրայ աւլանում էր եւ Լետուրնօի սաստիկ աղքատութիւնը, որ շատ անզամ զրկում էր նրան կրթական նպաստիչ միջոցներից: Իւր ուսանողական տարիները սաստիկ նեղութեամբ անցկացնելով Լետուրնո վերջացնում է սժշկութիւնը շատ փայլուն կերպով:

Հիմնովին ուսումնասիրելով ընական գիտութիւններն ու սժշկութիւնը, Լետուրնո, ինչպէս ասում է ինքն իւր «Mon évolution intellectuelle»-ում, սոլյորովին փոխում է եւ դառնում libre penseur: 1869 թուին նա մոնում է Փարիզի Մարդարանական Ընկերութեան մէջ, որ այն ժամանակ գիտական ազատ մոքերի ապաստանարան էր: Այստեղ մի շաբք դասախոսութիւններով պաշտպանում է դեռ նոր երեսան եկած դարվինականութիւնը, որ այն ժամանակ մի տեսակ յեղափոխական ըան էր համարում: Միենայն ժամանակ նա աշխատակցում է երկու մատերալիստական թերթերի: Այս ժամանակ նա հրատարակում է իւր առաջին զիրքը՝ «La physiologie des passions», որ յետոյ, երկրորդ տպագրութեամբ սոլյորովին բարեփոխել է:

Փարիզի պաշտուամից եւ կոմմինից յետոյ (1871 թ.) նա ստիլուամ է թողնել Փարիզն եւ ապաստանիլ Փլունցիայում, ուր ապրում է վեց տարի շարունակ եւ այս միջոցում պատրաստու նետեւեալ աշխատութիւնները.

«La Biologie», որ չորս տպագրութեան է արժանացել:

«La Sociologie d'après l'éthnographie», որ արդէն երեք անզամ տպագրուել է եւ որի միայն մի գլուխն է, որ այժմ ստաջարկում ենք մեր ընթերցողներին: Թերեւա մենք

կարողանանք մօտիկ ապագայում այս զիրքը գտնէ մաս մաս թարգմանելու:

Բացի այս երկու ինքնուրոյն երկերից՝ նա թարգմանել է.

Հեղեկելի «Histoire de la création des êtres organisés» եւ Բիւխների «La vie psychique des bêtes», «L'homme selon la science», «Lumière et Vie».

1878 թ. Լետուրնո վերադարձել է Փարիզ, ուր եւ ընակում է մինչեւ այժմ, (70. B^d. S^t. Michel.): Այստեղ եւանա սաստիկ աշխատում է, պատրաստելով մարդարանական յօդուածներ սժշկական գիտութիւնների հանրագիտական բառարանի համար: Ապա իւր խմբագրութեամբ հրատարակում է Մարդարանական գիտութիւնների բառարանը (Dictionary des sciences Anthropologiques), որ առաջինն է ֆրանսիական գրականութեան մէջ:

Վերջապէս 1883 թուին նա նշանակում է Փարիզի Մարդարանութեան դպրոցի ընկերաբանութեան ուսուցապետ եւ իւրաքանչիւր տարի իւր կարդացած դասախոսութիւններն ամփոփ հրատարակելով՝ հարստացնում է ֆրանսիական գրականութիւնը հետեւեալ ամէն մի ընկերաբան, ազգագրագէտի անհրաժեշտ աշխատութիւններով:

ա. «L'évolution du mariage et de la famille.

բ. L'évolution de la propriété.

շ. L'évolution politique dans les diverses races humaines.

դ. L'évolution juridique dans les diverses races humaines.

ե. L'évolution religieuse.

զ. L'évolution de la morale.

է. L'évolution littéraire.

ը. L'évolution de la guerre dans les diverses races.

թ. L'évolution de l'esclavage, մամուկի տակ է:

ժ. L'évolution du commerce վերջին 94/95 ուս. տարուայ դասախոսութիւնն է, որ շոտով լրյու կը տեսնի:

Այս բոլոր զբերն ազգագրական ընկերաբանական աշխատութիւններ են: Սրանցից ամէն մինը խօսում է մարդ-

կանց ռոլը ցեղերի մասին եւ աշխատում է կապել պատմականը նախապատմականի հետ, այժմեան ծանօթ սոութին ցեղերին անցեալի, անհետացած ցեղերին նման համարելով: Այսպիսով իմ սիրելի ուսուցչավետն էվլիախօնիստ եւ համեմատական տեսակէտից գծում է հասարակական կեանքի զինաւոր կէտերի ամիսով պատմովմիլոր:



ՍԵՐԱԿԸՆ ՅԵՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԿԵՆԴՈՆԵԿԱՆ ԹԱԳԵՇԽՈՐՈՒԹԵԱՆ ՄԷջ

U.

Ամուսնական, ինչպէս նաև հոգեբանական և ընկերաբանական (sociologique) խնդիրներից շատերի ժամանակ, կենդանական թագավորութեան վրայ մի հայեացք ձգելլ կարող է աւելի լուսաբանել խնդիրը:

Սերումը գործարանական ամէն էակների յարատեռւ-
թեան sine qua non պայմանը լինելով, տարբեր սեռի պատ-
կանող բոլոր կենդանիները, մասնաւանդ որոնց զուգաւորու-
թիւնն անհրաժեշտ է, որոշ ժամանակներում միմեանց որո-
նում և մօտենում են բեղմնաւորելու։ Եթէ հոգեքանու-
թիւնը լինէր մեր ուսումնասիրութեան առարկան, մենք
պէտք է հարցնէինք, թէ ո՞րտեղից է ծնել և յառաջացել
սիրոյ բնագդումը, ցեղի պաշտպանը, այդ բոնակալ զգաց-
մունքը, որ եսականութիւնով հանրային օգուտ է յառաջաց-
նում։ Բայց ընկերաբանական տեսակէտով, մենք պէտք է
միայն ցոյց տանք դէպքերը և թուենք նրա տեսակները։

Սյստեմակիները բազմաթիւ են: Բոլորից ստորինն և ամենալոնդհանուրից մինը՝ խառնակեցութիւնն է (promiscuité): Նատ կենդանիներ զուգաւորում են կարիքի դէպքում առանց հոգս տանելու ընտրութեան ազատութեան մասին, առանց նեղութիւն կրելու հաւատարմութեան համար: Մա-

կայն, գիտենք, որ միքանի, մանաւանդ թռչունների, ցեղերի մէջ, արուն քծնում է էգին և աշխատում նրան գիւր գալ: Սովորաբար միմեանցից հեռանում են հէնց որ կերքը յագուրդ է ստանում և կամ երբ ձագերը փոքր ինչ մեծանում են:

Եթէ կենդանիների մէջ խտոնակեցութիւնը սաստիկ տարածուած է, բազմակնութիւնը (polygamie) և շատ հազուգիւտ չէ: Նատ անգամ արուն սեպհականացնում է բաւական էգեր և նրանցից հեռացնում իւր ախոյեաններին: Մեր աղբանոցի աքաղաղը բազմակին և նախանձու կենդանու մի տիպարն է: Սակայն բազմակնութիւնը կենդանիների ցեղերի մէջ շատ հեռու է կանոն լինելոց: Եւ իսկապէս այդ չէ կարող գոյութիւն ունենալ, բայց եթէ երամակեաց կենդանիների մէջ, այն չէ, եթէ էգերն արուներից շատ աւելի են: Այսպէս՝ թաղանթաթեների (Hyménoptères) մէջ, ուր էգերի մի ահագին բազմութիւն միայն միքանի արու ունի, բազմակնութիւնն անհրաժեշտորէն գոյութիւն ունի:

Իսկ բազմայրութիւնը (polyandrie) կենդանիների մէջ հազիւ թէ գոյութիւն ունի, որովհետեւ, համարեա բոլոր բարձր ցեղերի մէջ, էգը, իւր համեմատական թուլութեան պատճառով, բոնադատուած է կրելու արուի փաղաքշանքը և չի կարող կազմել ու պահպանել արուների մի սարահ (serail): Սակայն միքանի ցեղերի մէջ, էգը, կարծես, աւելի սէր է տածում դէպի ամենազօրեղը, և երբ արու ախոյեանները նուազ թէ սաստիկ կատաղութիւնով կուլում են միմեանց հետ այդ էգին տիրելու, սա համբերութիւնով սպասում է յաղթողին, որ նրան յանձնուի: Պէտք էր կամաւ փակել աչքերը չճանաչելու մինչև մարդկալին ցեղի մէջ տիրող այս սիրահարական ընտրողութեան ձեւը, որ միայն քողարկուել և այլ ձեւ է ստացել:

Միակնութիւնը (monogamie), որ մարդկանց միքանի ցեղեր ընդունել են, սակայն փոքր ինչ ներողամտութիւնով, և որ մէր բարոյագէտները սովորութիւն ունին այդ՝ մարդկանց ամուսնութեան ամենալաւ ձեւը համարելու, կենդա-

նիների մէջ շատ հազուագիւտ չէ: Նախ նա անհրաժեշտ է սաստիկ ցրուած ցեղերի մէջ, որ կամ սնունդը շատ հազուագիւտ և կամ անընկերակեաց լինելու պատճառով՝ միայն զոյդ զոյդ կարող են ապրել: Սակայն այս պայմանները բացարձակապէս անհրաժեշտ չեն: Հնդկաստանի մաքաք կապէկը (macacus silenus) միայն մի էգ ունի և մինչև մահ նրան հաւատարիմ է մնում: Նումիտահաւերի (pindate) մէջ, արուն շատանում է մի էգով, ինչքան էլ որ հաւեր լինէին: Երբեմըն, կեանքի եղանակի հետ միութեան ձեւն էլ փոփոխուում է: Այսպէս՝ վայրի բադը, որ սովորաբար միակին է, ընտանալով, բազմակին է գառնում: Գուցէ ընկերակեաց միակինները, ինչպէս նումիտահաւը, իշնում են երկար ժամանակ առանձնացած զոյդով ապրող նախնիներից:

Միքանի կենդանիների մէջ, ինչպէս յալտնի է, ճշմարիտ, բարոյական միակնութիւնը մարդկալին միակնութիւնից աւելի բարձրանում է: Մեր ցեղի մէջ, մի ամուսնու մահը շատ քիչ անգամ է իւր կողակցին անմիիթար թողնում: Այն ինչ պսittacus pertinax թութակների մէջ ալրութիւնն ու մահը սովորաբար հոմանիշ են և այդպիսի մի դէպք էլ նկատուել է Փարիզի բուսաբանական այգում մի բրաղիլայի կապկի (ouistiti) վրայ: Սրանից հետեւում է, որ մարդկանց, ինչպէս և անասունների մէջ, կարեկցական զգացման ոլժը միշտ համեմատական չէ զարգացման աստիճանին:

Վերջապէս լիշենք սաստիկ ընկերակեաց (sociable) մեղուներին, մըջուններին, որոնց մէջ հասարակաց երջանկութեան հոգսը մինչև այն աստիճան է գերիշխում անձնական ընազդման, որ սերումը աշխատանքի բաժանմունքով գառել է միայն միքանի անձնաւորութիւնների ցանկալի աշխատանք: Այդքան անձնուրացութիւն գեռ ևս չէ նկատուած մարդկալին ոչ մի ընկերութեան մէջ, որովհետեւ, պարզ է, որ լամալի, տիբետեան և այլ կուսակրօնութիւններն ուրիշ նպատակ ունին, քան թէ նուիրուիլ ամբողջ հասարակական մարմնի օգտի աշխատանքին:

Բայց կենդանիների մէջ սերական միութիւնները վարե-

լու և կանոնաւորելու համար ոչ օրէնք և՛ ոչ օրէնսդիրք կայ, հապա ինչո՞ւ միութեան այդ ձեւերն այդքան տարբեր են: Սրա պատճառը միայն կենսական մրցման, գոյութեան կոուի անհրաժեշտութեան մէջ պիտի որոնել: Անհատների ցըւումը կամ միախմբումը, սեռերի թուի համեմատութիւնը, անշուշտ մեծ գեր են խաղում խառնակեցիկ, միակին կամ բազմակին աճման մէջ: Ամուսնական այն ձեւը, որ ամենից աւելի լաւ է ապահովել ցեղի տեսականութիւնը, որ ամենից աւելի յարմար է եղել բնակավայրի պահանջներին, գոյութեան կոուին ևալն, դարձել է ընտրութեան առարկայ (objet de sélection), յետոյ սովորութիւն և ապա բնագումում: Տարակոյս չկայ, որ միակնութիւնը, բոլոր դէպքերում, որի օրինակները մենք լիշեցինք, միքանի ցեղերի համար, որոշ հանգամանքներում ահագին առաւելութիւններ է ունեցել. այսպէս օր. նրանց թուլ է տուել աւելի լաւ խնամել երեխաներին, և նրանցից շատերին ապրեցնել:

Միւնոյն օրէնքները, միւնոյն անհրաժեշտութիւններն են մղել մարդկանց ընկերութիւններն ամուսնական այս կամ այն շաւղի մէջ: Ճիշտն ասած, այս դէպքում, մարդը, ինչքան էլ որ խելացի է եղել, հազիւ թէ կենդանուց տւելի հնարագիւտ եղած լինի: Մինչև անգամ նրանից էլ ստոր է եղել, որովհետև երբէք չէ մտածել ստեղծել մեղուների և մրջունների պէս միմիայն աճման նուիրուած դասակարգեր: Միայն մարդը, շատ անգամ, բայց ոչ միշտ, աւելի լաւ որոշել է իւր սերական յարաբերութեան ձեւերը: Եւ միմիայն մարդկանց ընկերութիւնների մէջ գոյութիւն ունի ամուսնութիւնը, որ կարգադրուած է հասարակական պայմանադրութիւններով. սակայն այս պայմանադրութիւններն ոչ միշտ և ոչ ամէն տեղ խիստ օրէնքի ձեւ են ստացել:

Բ.

ՄԵՐԴԿԵՆՑ ԸՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ.

Կը տեսնենք, որ նախնական մարդկանց շատ հասարակութիւնների մէջ, սերական միութիւնը բոլորովին անս-

նական է եղած, առանց կանոնի և առանց սանձի: Արդեօք այս անասնական դրութիւնը մարդկանց մէջ էլ կազմում է առաջին աստիճանը, որից լետոյ ամուսնութիւնը զարդանում է, անցնելով կանոնաւոր, ամէն տեղ միկնոյն աստիճաններով, ինչպէս ենթադրում են միքանի ընկերաբաններ (սոսիօդուներ), թէ ոչ: Ամենւին: Խնչպէս անասունները, մարդիկ էլ հպատակում են անհրաժեշտութիւնը սաստիկ փոփոխւող պահանջներ ունի: Մարդիկ էլ անասունների պէս բաւականանում են իրենց կոպիտ ցանկութիւններին յագուրդ տալով: Նաև միւնոյն ցեղի, միւնոյն ժողովրդի մէջ կարելի է գտնել սերական միութեան տարբեր ձեւեր, որովհետև վայրենիների մեծամասնութիւնը բարոյականութիւնը պահպանող և թուլերին պաշտպանող օրէնքներ չի ճանաչում: Մենք արդէն գիտենք թէ նախնական ընկերութիւնների մէջ երեխաների կեանքն որքան թողնուած էր ծնողների հաճոյքին: Կանանց կեանքն էլ հազիւ թէ աւելի պաշտպանուած լինի և նրանց ազատութիւնը նոյնպէս հազիւ թէ ապահովուած: Սակայն որովհետև հասարակական մի խմբի բարօրութիւնը վերջնականապէս կախուած է իւր անդամների իւրաքանչիւրի գործունէութիւնից, ուստի զանազան վարմունքներ այն հետեւանքն են ունենուած, որ մի ժողովուրդ գոյութեան համար կոուելով իւր ախոյեանի հետ կամ կորչում է և կամ նրան ոչնչացնում: Նոյնպէս և՝ արտաքին հանգամանքների ազգեցութեամբ հասարակութեան օգտաւէտ սովորութիւնները հաստատուած են բնիկների մէջ: Եւ այսպիսով կազմուած սովորութիւններ, բարք, որոնց գէմ մեղանչելլ լաւ չէ: Բայց այս բարքերը տարբերուած են, որովհետև գոյութեան կը ուի պայմաններն ամէն տեղ միւնոյնը չեն լինում: Եւ ահա թէ ինչու, սերական միութեան ձեւերը, ամուսնութիւնը, եթէ կարելի է ասել, այնքան փոփոխական են: Խառնակեցութիւն, բազմակնութիւն, բազմալրութիւն, մասնաւոր ամուսնութիւն, որ պարտաւորական էր շաբաթուայ կամ ամի որոշ օրերուած, իսկ միւս ժամանակ փոխադարձաբար թոյ-

լատրում էին բազմաթիւ միութիւններ, միակնութիւն, օտարացեղ (exogamique) և համընտանի (endogamicus) ամուսնութիւններ, այս բոլորը գոյութիւն ունին մարդկանց զանազան հասարակութիւնների մէջ և բաւական կամայաբար: Այսպէս մշտատե միակնութիւնը, որ մեր բոլոր բարոյագէտները գովաբանում են որպէս ամենալաւ ամուսնութեան տիպար, սաստիկ զարգացած է Ցէլոնի Վեդահների մէջ, որոնք փոքր ինչ միայն բարձր են կենդանիներից: Պատճառո՞ւ սրանք գոյգ գոյգ սաստիկ սփուռած լինելով, բազմակնութիւնը և բազմալրութիւնը նրանց անհնարին է եղել: Այսպէս ուրեմն, ամուսնական ամենալաւ ձեւը, մեր կարծիքով, միշտ նշան չեն մտաւոր բարձր զարգացման: Ամուսնութիւնն, ինչպէս և ամէն բան, գոյութեան անհրաժեշտութեան համեմատ են կարգաւորուած, որ և ապացուցանելու ենք փաստերով:

Գ.

ԵՐՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ ՄԵԼԵԿԵՑԻ ԲՅՈՒԹԻՒՆ:

Առաջները Տոսմանիայում, ինչպէս և այժմ Աւստրալիայում և Մելանեզիայի կղզիներից շատերի մէջ կար «աղջկէ փախցնելու». օտարացեղ ամուսնութեան սովորութիւնը: Եւ սա այս ցեղերի մէջ, ինչպէս իսկոյն կը տեսնենք, սերական միութեան օրինաւոր ձեւն է համարում: Բայց այս օրինաւոր ամուսնութիւնից դուրս թուլատրուած է սաստիկ խառնակեցութիւնը: Եւ նոյն իսկ այդ խառնակեցութիւնը համարում է սերական միութեան սիրահարական ձեր, որովհետեւ Աւստրալիայում օտարացեղ ամուսնութեան միակ նպատակը մի գերուհի, իսկապէս մի անասուն ունենալն է, որ ջուր, փայտ բերէ և բեռ շալակէ: Այս ժողովրդի մէջ աղջիկները տաս և տղաները տասերեք կամ տասչորս տարեկանից սկսած ազատ ապրում են միմեանց հետ: Մինչև անգամ տօնւում են զանազան տօներ, որոնք նշան և ազատու-

թիւն են տալիս նորատիներին զուգաւորուելու: Բայց դրանից երիտասարդ աղջկայ պարտականութիւնն է գիշերը գնալ բաժանել հիւրերի անկողինը. ծնողներն էլ շատ անգամ յարաբերութիւն են ունենում իրենց աղջիկների հետ և ալին: Ճիշտն ասած՝ Աւստրալիայում ամուսնութիւնը գոյութիւն չունի և երբ փոքր ինչ աւելի մօտիկ նաև են՝ կատարելապէս կը զգուին աւստրալիացիների այս օտարացեղ ամուսնութիւնից: Եւ ինչ ճանապարհորդները սխալմամբ ամուսնութիւն են կոչել, դա ուղղակի մի ստրկուհու փախցընելն է, մի ստրկուհու, որ անկասկած կարող է ծառայել տիրող սիրային հաճոյքներին ևս, եթէ միայն նրան դուր գայ, որովհետև նա նրա ընտանի անասունը, նրա իրն է, մի էակ, որին նա իրաւունք ունի ծեծելու, վիրաւորելու, սպանելու և մինչ իսկ հարկ եղած միջոցին ուտելու: Ենթադրում են, թէ այս աննախանձելի դրութիւնը վերապահուած է եղել ախոյեան ժողովրդից փախցրած կանանց և որ տղամարդիկ այդ միւնոյն իրաւունքը չեն ունեցել միւնոյն ժողովրդին պատկանող կանանց վրայ: Ելքը այսպէս է նկարագրում այս ենթադրուած ամուսնութիւնը: Տղամարդը նախ դուակի մի հարուածով սասանեցնում է պատահած այլացեղ մենակ կնոջը, յետոյ մազերը թեկին փաթաթելով քաշ է տալիս իւր յետեից: Ապա սպասում է որ ուշքի գայ և յետոյ ստիպում է իրեն հետեիլ: Հասկանալի է, որ նա բոնաբարում է նրան, եթէ դուր է գալիս: Այս առեւանգումը Աւստրալիայում մի շատ գովական գործ է համարում և երեխաները խաղերի մէջ վարժում են դրան: Եւ հէնց այդտեղ է սերական միութեան ամենագազանական ձեր, որ իսկապէս արժանի անգամ չէ ամուսնութիւն անուան: Մեղմացած առեւանգումը, որ երեմն գործադրում էր, փոքր ինչ արժանի է այս անուան: Տոսմանիայում, վերապատուելի Բոնվիկի կարծիքով, կինը երեմն նախալարաստում էր և առեւանգումը շինծու էր լինում, սակայն սա շատ հազիւ էր պատահում, միայն շատ անգամ փախչելուց յետոյ բանակցում էին կնոջ ժողովրդի հետ: Մի որոշ օր երկու տը-

բիբունների ժողովի ներկայութեամբ առևանգողը պարտաւոր էր կանգնած ծառայել հակառակ տրիբունին, որ նրան տալիս էր նիզակի մի որոշ թուով հարուածներ. մի քանի տեղեր առևանգողն ազատ էր պաշտպանուելու իւր փոքրիկ վահանով: Սովորաբար ամէն բան վերջանում էր առանց արիւն թափելու, հասարակաց ճաշերը կնքում էին հաշտութիւնը և երեխն էլ տօնում էին ամուսնութիւնը զուգակիցներին կապելով միենոյն ծառին և նրանց համապատասխան կտրիչ ատամները կոտրում: Դրանից յետոյ փախցրած կինը օրինաւոր կերպով պատկանում էր առևանգողին, որ իրաւունք ունէր նրա հետ իւր քմքի համեմատ վարուելու և փոխ կամ վարձու տալու ամէն մի եկուորի: Խսկ ինչ վերաբերում է կնոջը, նրան սաստիկ արգելուած էր չժողովադրուած անհաւատարմութիւնն և եթէ մեղանչէր՝ շատ անգամ գազանաբար պատժում էին, որովհետև փախցըրած կինը տիրոջ սեպհականութիւնն էր: Այս օտարացեղ կարծուած ամուսնութիւնն այնքան էլ հեշտ գլուխ չգալով շատ աւստրալեացիներ ամուրի են մնում և շատերը մինչև երեսուն տարեկան դառնալը հազիւ են կարողանում մի կին գողանալ: Հասկանալի է, որ բազմակնութիւնը նրանց արգելուած չէ: Սեպհական կին չունեցողները օգտուում են համընտանի խառնակեցութիւնից, վարձելով իրենց բարեկամների կանանցը:

Ս.յս սովորութիւններն՝ աղջիկների սպանութեան հետ
միացած՝ արգելք են լինում վայրենի Աւտորալիալի բնակիչ-
ների բազմանալուն։ Նոյնպէս շատ տրիբուններում կանանց
թիւը տղամարդկանց թուից պակաս է, որից և յառաջանում
է խառնակեցութեան անհրաժեշտութիւնն և մի բնական
ձգտում դէպի օտարացեղ ամուսնութիւնը։

Կանանց փախցնելու սովորութիւնը տարածուած է ՄԵ-
ՂԱՆԵԳԻՎԱՐԻ կղզիներից միքանիսում։ Բալի, ճաւայի և Նոր-
Գուշինէի միջև գետեղուած կղզում կանանց փախցնում են
Ճիշտ այնպէս, ինչպէս Աւստրալիայում և անմիջապէս բռնա-
բարում։ Սրանից լետոյ առեանդողը վճարում է ծնողներին

փախցրած կնոջ գինը, և այսպիսով դարձնում նրան իրեն
ստրուկ: Ֆիդջիումն էլ իրական կամ ձևական առևանգումն
շատ սովորական բան էր: Իսկ կինը կամ ազատում էր փախ-
չելով մինի մօտ, որ կարող էր պաշտպանել իրեն և կամ
ընդունում էր փախցնողին որպէս ամուսին և ծնողներին
տուած մի խնճուք օրինաւոր էր դարձնում ամուսնութիւնը:
Վիտիում, ինչպէս և Աւստրալիայում, կանաչը իրենց ամու-
սինների սեփականութիւնն են. ցեղապետներն երբեմն մի-
քանի հարիւրակներ են ունենում, որոնց մէջ միքանիսն օրի-
նաւոր են համարում և միայն սրանց որդիներն են ժա-
ռանապում: Միւսներն հարճեր, ստրուկներ, ընտանի կենդա-
նիներ են, որոնց նա պահում է իւր պատերազմիկների հա-
մար, նրանց հաւատարմութիւնը քաջալերելու նպատակով:
Նոյն իսկ Վիտիի ցեղապետների օրինաւոր կիները մի օտա-
րոտի պարտականութիւն ունին դէպի իրենց ամուսինը:
Իրենց ամուսնութեան միջոցին նրանք պարտաւոր են ամ-
բոխի միջից ընտրել մի նորափթիթ աղջիկ, որին մեծ հոգա-
տարութեամբ խնամում են մինչև արբուն հասակը, յետոյ,
մի գեղեցիկ օր, նրան լողացնելուց, օծելուց, ծաղկիներով
զարդարելուց յետ, բոլորովին մերկ տանում են իրենց տի-
րոջը և լոելեայն վերադառնում:

Զի՞ երևում թէ առեանգութեամբ ամուսնութիւնը շատ գործածական լինէր Նոր-Կալեղոնիայում։ Այնտեղ երեխաները սաստիկ փոքր հասակում են նշանագրուում, որ առանձին մի հետևանք չի ունենում։ Եւ որովհետեւ Մելանեզիայի մնացած բոլոր մասերում բազմակնութիւնը կարող անձանց թուլատրուած է, ուստի սա բռնում է նոր կալեղոնիացիներին անծանօթ աղախնութեան տեղը։ Նոր Կալեղոնիայում մօր կողմի մօտիկ ազգականների հետ չեն ամուսնանում, որ, ինչպէս այդ, այնպէս և ուրիշ տեղերի վերաբերութեամբ ցոյց է տալիս խառնակեցութեան մի հին ժամանակամիջոց, երբ գժուար էր հայրը ճանաչել։ Նոր Կալեղոնիացի կինը նոյնպէս իւր ամուսնու սեպհականութիւնն է և վերջինս իրաւունք ունի սպանելու նրան, եթէ սա շնանալ, թէ և

Երբեմն նա շատանում է նրան ուղղելով և կամ գուրս է անում կաշին մի լաւ քերթելուց յետոյ: Նոր-Կալիդոնիայում սերական յարաբերութիւնները հետաքրքիր են նոյն իսկ իրենց անասնականութիւնով: Դրանք գիշերները հազիւ են տեղի ունենում, որովհետև տղամարդիկ և կիները միմեանցից բաժան խորշերում են քնում, այլ սովորաբար ցերեկը, մուշտակների մէջ մարդ և կին միանում են բոլորովին անասնաբար, more canino, ինչպէս ասում են աստուծաբանները: Օ. Բեկկարիի և Միկլիւչօ—Մակլայի ասելով միւնոյն սովորութիւնը կայ և նոր Գուլինէալի Պատուների մէջ:

Այս էլ աւելացնենք, որ Նոր-Կալեդոնիայի սովորութիւններն ստիպում են բոլոր, թէ ամուսնացած և թէ ամուրի մարդկանց իսկոյն և եթ ամուսնանալ եղքօր այրու հետ։ Այս սովորութիւնը ուրիշ շատ տեղեր էլ տարածուած է և նոյն իսկ Հրէաների մէջ սաստիկ գործածական էր։

Ասածներս ցոյց են տալիս թէ Նոր-Կալիդոնիայի երկու սեռի միութիւնն որքան քիչ արժանի է ամուսնութիւն անուան, սակայն հէնց այստեղ սկսում է ծնունդ առնել մի կազմակերպութիւն, տեղի են ունենում բարեկամական պայմանագրութիւն ծնողների հետ, երևում է սեպհականութեան իրաւունք կնոջ վրայ, և մինչեւ անգամ որոշ տրիբունների մանաւանդ Կանալայի մէջ հաստատում է մի տեսակ օրինաւոր քննութիւն ամուսնական խնդիրների վրայ: Այս վերջին տրիբունի մէջ, լիրակի, շնութեան մէջ բոնուած բոլոր անհատները դատում են ծերունիների ժողովում, որին նախագահում է ցեղապետը, և սովորաբար անմիջապէս մահի ենթարկուում: Եւ ամուսնու իրաւունքների դէմ այս դաւաճանութիւնը, սեպհականութեան դէմ գործած մի մեծիր է համարուում:

Մելանեզիակի այս ամուսնութիւնը կամ ամուսնութիւն
կոչուածը կարելի է համեմատել Անդամանիտների խառ-
նակեցութեան հետ, որ բոլորովին նախնական, անասնական
է: Նրանց մէջ կանայք պատկանում են տոհմի (clan) բոլոր ան-
դամներին և եթէ նրանցից մինին ընդդիմագրեն, մեծ լանցանք

գործած կը լինին և խստիւ կը պատժուին։ Սակայն երեմն մի տեսակ ժամանակաւոր միութիւն է հաստատում մի մարդու և մի կնոջ մէջ, երբ վերջինս արդէն լզացած է լինում, որ և տեռում է գրեթէ միշտ մինչև երեխալին ծծից կտրելը։

Ս.մփոփելով ասածներս, տեսնում ենք, որ Մելանեզիայի
սովորութիւնները մեզ ցոյց են տալիս ամուսնութեան սկիզ-
բը ցեղի մէջ։ Սկզբում տոհմի մէջ խառնակեցութիւն է տի-
բում, որ մինչև այժմ էլ կայ հեթանոս խմբերի մէջ, յետոյ
կանանց սակաւութիւնը և մի կամ մի քանի այսպէս ասած
կենդանիների կարիքը դրգել է կարելիի չափ օտարացել կա-
նանց փախցնել, սկզբում ծայրայեղ բռնութեամբ, գազաննե-
րի պէս։ Յետոյ երկար քննութիւնից ու վիճաբանութիւննե-
րից յետ երկու ժողովուրդներն վաւերացնում են կատարուած
դէպքը։ Վերջապէս փախցնելը փոքր առ փոքր դառնում է
մի ծէս, մի նախապատրաստուած կատակերգութիւն։ Միայն
միշտ բազմտկնութիւնն ընդունուած է եղել, կինը միշտ տի-
րոջ սեպհականութիւնն է կազմել, որ չէ կարողացել առանց
նրա հրամանի անհաւատարիմ լինել նրան, և որ երբէք ի-
րաւունք չէ ունեցել նախանձելու ամուսնու սիրուհիներին և
պատմելու ուրիշներին ամուսնուց կրած տանջանքն ու նե
ղութիւնը։



Արդեօք խառնակեցութիւնը նախնական բոլոր տոհմերի
մէջ էլ ընդհանրապէս եղել է թէ ոչ։ Գուցէ, բայց արդէն
Հոտտենտոտների մէջ չկայ։ միևնույնն և օտարացեղ առևանգումն
է, որ պ. Լեննան կամենում էր համարել ամուսնական մի
աստիճան, որ մօտաւորապէս ամէն տեղ գոյութիւն ունի և
կամ գոյութիւն է ունեցել։ Հոտտենտոտ աղջիկը պատկանում
է իւր ծնողներին, որ բարեկամաբար նրան փոխում է ընդ-
հանրապէս մի եղի կամ մի կովի հետ։ Եւ որովհետեւ Հոտտեն-

տոտ կանալք շուտ են պառաւում, ուստի թէ ամուսնացած և թէ ամուրի մարդիկ, օգտուելով այն հանգամանքից, որ բազմակնութիւնը արգելուած չէ, սովորութիւն ունին 6 կամ 7 տարեկան փոքրիկ աղջիկներ պահել, մեծցնել, որպէսզի յետոյ գրանք փոխարինեն իրենց պառաւած կանանց: Եւ արդարեւ Հոտենտոտուհիները տասերկու կամ տասերեք տարեկան հասակում արբունանում են, և նրանց ծերութիւնը վաղահաս է ինչպէս և նրանց հասունութիւնը: Հոտենտոտաի ամուսնութիւնը մի քանի տեղերում զուտ վաճառականական մի գործողութիւն է, ամեն տեսակ հաստատութիւններից զուրկ և կամայաբար քաքտելի: Հոտենտոտ կանալք տղամարդկանցից բազմաթիւ են, հետեալիս և բազմակնութիւնը անհրաժեշտ է, նաև քարոզիչների հաստատած երկրագործական գաղթավայրում քրիստոնէական միակնութեան ներմուծումը շատ մեծ ընդդիմադրութիւն է գտնում հէնց երկու սեռից էլ:

Այս բոլորի մէջ ոչինչ չկայ, որ քեզ թէ շատ նմանուէր Եւրոպայի օրէնսդիրների կամ բարոյագէտների հասկացած ամուսնութեան. նաև Բոժեսմանները, որոնց քաղաքակրթութիւնը Հոտենտոտներից ստոր է, իրենց լեզուի մէջ աղջիկը ամուսնացած կնոջից տարեբորի մի խօսք անգամ չունին:

Սերական միութեան յարաբերութեամբ Կաֆրների սովորութիւնները շատ նման են Հոտենտոտներինին: Սէրը այնտեղ ոչինչ է, ասում է Լիխտէնստէլինը, և շատ հետազօտողներ հաստատում են այդ: Հարուստ մարդիկը և ցեղապետները միշտ շատ կիներ ունենալով, կանացի ապրանքը համեմատաբար սակաւ է ամուսնական հրապարակում, սովորութիւն կայ նոյնպէս աղջիկներ գնել իրենց ծնողներից դեռ մանուկ հասակում: Մակոլոլոների մէջ աներին վճարում են մի գումար, որով գնում են նրա իւր աղջկայ ունենալիք որդիների վրայ ունեցած սեպհականութեան իրաւունքը: Կաֆր կինը միանգամ օրինաւոր կերպով գնուելուց յետ դառնում է ամուսնու սեպհականութիւնը բառիս ամբողջ իմաստով:

Կնոջ տէրը վարւում է նրա. Հետ ինչպէս ուզում է, նա իրաւունք ունի սպանել նրան, եթէ սա համարձակի ձեռք բարձրացնել նրա վրայ: Նա կարող է նրան ծեծել ինչքան կամենում է. կարող է ամէն եկուոր սպիտակի վարձով տալ: Կաֆր կիներն ամենեին չեն նախանձում, այլ ընդհակառակը սաստիկ ցանկանում են, որ իրենց սեպհականատէրը գնէ ուրիշ աւելի մատաղ կիներ, որովհետև գրանով նրանց հեղինակութիւնը բարձրանում է և աշխատանքը թեթևանում: Չի երևում, որ օտարացեղ ամուսնութիւնը բոլոր Կաֆըրների մէջ որպէս ընդհանուր կանոն գոյութիւն ունեցած լինի, եթէ միայն այդպէս չհամարենք Դամարացիների նամաքացի Հոտենտոտներից աղջիկ փախցնելը և Բակալահարիների խորշումը իրենց գաշնակիցներից կին առնելու:

Գաբոնում տիրում են սրանց շատ նման սովորութիւններ: Աղջիկներն երեք կամ չորս տարեկան հասակում գընւում և պահուում են որպէս նշանուած, 13 կամ 14 տարեկան՝ դառնում են մալր, շատ շուտով պառաւում և շտանգամ դեռահաս և ամուլ մեռնում, որովհետև գնորդն սկսում է վայելել, հէնց որ ապրանքն ուլժ կամ ինն տարեկան է դառնում: Ամէն տեղ բազմակնութիւնը գոյութիւն ունի և կանալք իսկապէս կենդանիներ են, որ մշակում են երկրը և պարտաւորուած են կերակուր հայթհայթելու իրենց տէրերին, որոնք ոչինչ չեն շինում և դեռ քէֆերի ուզածի չափ ձաղկում են խեղճերին: Կինը սեպհականութիւն համարուելով, անառակութեան համար, որին սաստիկ ենթակայ է, պատժում է իւր գործակցի հետ, մանաւանդերը տիկնանց տիկին է, որ սովորաբար առաջին ամուսնացն է լինում: Այս տիկնանց տիկնոջ սիրահարն առնուազը ծախւում է, որպէս ստրուկ: Մի մարդու մահից յետոյ նրա ժառանգը իրաւունք ունի սեպհականացնելու բոլոր կանանց և ազատ է նրանց բաժանելու ուրիշ ազգականների:

Ալանտիացիների մէջ, որոնք համեմատաբար աւելի քաղաքակրթուած են, միւնոյն բազմակնութիւնը, միւնոյն օրոլոցի նշանագրութիւնն է տիրում: Ամուսնու իրաւունք-

ները ծալրայեղ են. փոքրիկ նշանուածի հետ հանաք անող-ներն անգամ ստիպում են ամուսնու օգտին տուգանք վճարելու, իսկ եթէ սա, մեծանալիս, շնանալ, տէրը կարող է կամ սպանել նրան և կամ քիթը կտրել և մի ստրկի հետ ամուսնացնել: Նա նոյնպէս իրաւունք ունի կտրելու նրա վերին շրթունքը, եթէ գաղտնիքներից մինը դուրս ասէ, մի ականջը, եթէ բռնէ նրան իրեն ականջ դնելիս: Սակայն եթէ ամուսինն երեք տարի անյատանալ, կինը կարող է ամուսնալ, բայց երբ նա վերադառնալ, երկրորդ ամուսնուց եղած որդիներն էլ իրեն կը պատկանին: Միայն թագաւորի աղջիկներն են ազատ իրենց հաւանած սիրահարը կամ ամուսինն առնելու, որ և դառնում է նրանց ստրուկը, բառիս բուն նշանակութիւնով և ստիպուած է անձնասպան լինել, եթէ կինը մեռնի: Եւ միմիայն այս մասնաւոր դէպքումն է, որ տղամարդու նախապատութիւնը խոնարհեցնում է իւր դրօշակը միապետական պատրանքի առաջ:

Նիգերի աւազանում, Սուլդանում, ուր մահմեդականութիւնը քիչ շատ մուտք է գործել, ֆուլահների, Յոլոֆների, Մանգինզների, Բամբարաների և ուրիշ ցեղերի մէջ ամուսնութիւնն արդէն փոքր ինչ մարդավայել ձև է ստացել, կնոջ հետ փոքր ինչ մեղմ են վարւում: Երբեմն իսկ նրան փոքր ի շատէ խորհուրդ են հարցնում. ամուսինը կնոջը իւր մահից յետ ապահովելու համար տալիս է նրան, եթէ միայն հարուստ է, ստրուկ կանայք, արդուսարքի իւրեր, սանդ, երկանք և այլն: Մի մի տեղ էլ, կնոջը մի տեսակ իրաւունքներ են տալիս, ինչպէս օրինակ Վուլուում (Wouou) և Բոււսայում կինն առանց տատի համաձայնութեան չի կարող ամուսնանալ:

Սուլիմանների մէջ կինը կարող է թողնել ամուսինը և մի ուրիշի հետ ապրել, միայն թէ պիտի վերադարձնէ ամուսնութեան ժամանակ իւր համար վճարուած գլխագինը: Գուլինէի կողմերում Ֆանտի կանայք էլ այդպիսի մի իրաւունք ունին, միայն այստեղ բացի գլխագնի վերադարձնելը, միքանի ուարտականութիւններ էլ ունին վճարելու այն ա-

մէն երեխաների համար, որ ամուսինը նեղութիւն է յանձն առել յառաջացնելու: Պէտք է աւելացնել և այս, որ այս կողմերում մարդիկ բազմակնութիւնն եկամտի աղբիւր են դարձրել, վաճառելով իրենց երեխաները:

Սուլդանի զանազան վիճակներում, ինչպէս և ամենաանզարգացած նեգրների մէջ, սեռերի միութիւնը նոյնպէս անասնաբար է կատարում: Տիմանների մէջ աղջկայ համաձայնութիւնը բոլորովին չեն հարցնում: Նրան գնում են ծնողներից միքանի կարաս արմաւինու գինով, կտորներով և ալլն: Միենոյն սովորութիւնը տիրում է և Մանգինզներից շատերի մէջ, որ հաշիւը վերջացնելուց յետ, բարեկամների օգնութեամբ տանում են աղջկը: Եւ այստեղ այդ ամուսնութիւնը փախցնելու ձևն է ստանում: Եարբիբայում բնիկներն այնպիսի անտարբերութեամբ են կին առնում, որ կարծես «ցորենի հասկ քաղելիս լինին»: Կուրանգոյում դեռահաս աղջիկները նախ ծախւում են հարուստ ծերունիների, որոնց մահից յետ վրէժ են առնում իրենց կամքով մի երիտասարդ ընտրելով, որովհետեւ այս անգամ ազատ են: Եարբիբայում որդին ժառանգում է հօր թողած այրիները: Ուրիշ տեղեր, ամուսնի մահից յետով երեխայ չունեցող կանայք ծախւում են: Սենեգամբիայի միքանի վիճակներում Միւմբօ-Ֆիւմբօ կոչւող մի երետկայական դատողի դեր են հնարել, որ գիշերը տարօրինակ շորեր հագած գալիս է այդ նպատակով հաւաքուած բոլոր բնակիչների մէջ ընտրելու և ձաղկելու վատ կեանք վարող կանանց:

Եթէ Ա.Փրիկայի նեգրուհու հետ գրեթէ ամէն տեղ վարւում են ինչպէս անասունի, սա էլ, կարծես գրա փոխարէն, շատ ճանապարհորդների ասելով, իրեն շատ վատ է պահում: Եւ այս այսպէս է Գաբոնից սկսած, Դիւ Շարլուի ասելով, մինչև վերին նեղոսի աւազանը, ինչպէս պատմում է Շվէյնֆիւրտը: Այստեղ ևս տիրում է բազմակնութիւնն և կինը սովորաբար գնուում է երկաթի զանազան անօթներով, որ Բոնգոների մէջ հայրը պարտաւոր է ապահարզանի ժամանակ առնուազը մաս մաս վերադարձնել: Գլխաղինը պէտք

Ե լիովին վերադարձնել մինչեւ անգամ և այն ժամանակ, երբ ամուսինը (հայրը) իրեն է պահում երեխաներին:

Իրաւունքով, կանացի սեպհականութիւնն անբռնաբարելի է և բռնաբարողն իսկոյն մահի է դատապարտում:

Մի խօսքով գրեթէ ամբողջ Ա.Փրիկարում նեգր կինն իւր ամուսնու իրն է և սա իրաւունք ունի վարուելու նրա հետինչպէս մի անասնի և գրեթէ միշտ իւր եզի պէս բանեցնում է նրան: «Ես գնել եմ նրան», ասում էր մի նեգր իւր կնոջ մասին խօսելիս, «Հետևապէս նա պարտաւոր է աշխատելու»: Մահմետական նեգրների մէջ մորպետը (marabout) օրհնում է ամուսնութիւնը, բայց միւս բոլոր տեղերում սա առեւտրական մի դաշինք է, զուտ քաղաքական, ուր կրօնն ոչինչ գործ չունի: Նոյնպէս ամէն տեղ տիրում է բազմակնութիւն և գրամական մի որոշ հատուցումով ամուսինը կարող է ապահարզան տալ: Մատակասկարում, ուր սակայն ամուսնութիւնը կատարւում է մի իշխանաւորի առաջ, մի որոշ տուրք վճարելով, ամուսինը կարող է երկրորդ անգամ միենալու տուրքը վճարելով, արձակել կնոջը, որ դառնում է ազատ, եթէ տասերկու օրուալ ընթացքում ամուսինը չի ստըշանում:

Կնոջ կուսութիւնը գնահատւում է և պահանջւում է միայն մահմեդական երկրներում, ուր մաւրիտական ցեղը քիչ շատ մուտք է գործել: Կայարտայում կանայք հարսանիքի հետևեալ օրը, առաւտօտեան, ժողովում են մեծ զգուշութեամբ քննելու հարսանեկան առագաստը, որ պէտք է մեծ փայլով վկայէ հարսի կուսութիւնը, ապա թէ ոչ հարսանիքն ոչինչ կը համարուի: Դրա բոլորովին հսկառակն է կատարում Մատակասկարի Սակկալաւների մէջ, ուր նորափթիթ աղջիկներն ամուսնութիւնից առաջ իրենք խախտում են իրենց կուսութիւնը, եթէ նրանց ծնողներն աւելի վաղ չեն մտածել կատարելու այս նախակարգ գործողութիւնը:

Ա.Փրիկարի Ա.Բաբների, Բերբերների, Նուբիացիների, Հաբեշների մէջ ամուսնական սովորութիւնները տարբերում

են, որովհետև դրանք տարբեր յեղեր են և մի քանիսն էլ ասիական ծագումն ունին. վերջապէս Եգիպտոսի, Արաբիայի և Բիւզանդիայի քաղաքակրթութիւնն ու կրօնները խոր հետքեր են ժողել Ա.Ֆրիկարի ալդ հիւսիսային կողմերում: Հին եգիպտացիները միակին էին, օժտում էին աղջիկներին, պատժում էին շնութիւնը՝ գաւազանի հազար հարուած տալով մարդուն և կտրելով կնոջ քիթը: Այս սովորութիւններից ոչ մինը չէ վերատեել, բայց գուցէ եգիպտական աւանդութեան պէտք է վերադրել այն մեծ ազատութիւնը, որ վայելում են բերբեր կանայք բացարձակ տէր լինելով կայքի, գործի և որդիների, որոնք և կրում են նրանց անունը: Սահարայի մի քանի տրիբուների մէջ, որ սաստիկ նման են բերբերներին, մարդաթողութիւնը կանանց համար պատիւ է համարւում: Շատ անգամ նրանք ասում են միմեանց. «Դու շատ անպէտք կին ես, մարդիկ քեզ արհամարհել են և միայն մէկն է քեզ ուզել»:

Նուբիայի Հասսինիկ Ա.Բաբների մէջ տիրում է մի աւելի օտարոտի սովորութիւն, այն է երեք քառորդի ամուսնութիւնը, որ թոյլ է տալիս կնոջը չորս օրից մինը նուիրելու ում և կամենալի: Սահարայի և Տուարէտի ուրիշ տրիբուների մէջ աղջիկն ամուսնանալուց առաջ պարտաւոր է խառնակեցութիւնով շահել իւր ծնողներին նստած ծախսը և որքան աւելի յաջողութիւն է ունենում այդ առեւտուրի մէջ, այնքան աւելի նրա ձեռքը խնդրողներ են լինում: Ամուսնական ազատութիւնն ու առաջարկութիւններ անելը, կարծես, Բերբերների մի բնորոշ յատկութիւնն է, որովհետև Գուանչները, որոնք հաւանականորէն պատկանում են այդ ցեղին, գոնէ իրենց քաղաքականութեամբ, Կանարիայի մի քանի կղզիներում հաստատել են բազմալրութիւնը:

Քուր և եղբօր տմուսնութիւնը, որ օրինաւոր և պատուաւոր էր համարւում նախկին Եգիպտոսում, ուր բազմաթիւ թագուհիներ փառաւորւում էին «Թագաւորի քոյլ և ամուսին» լինելով, զեռ էլի գտնուում է Դար-Ֆորում: Այստեղ, բարբերի սաստիկ ազատութիւն է տիրում, սուլթանի աղջիկ-

ները նոյնպէս բացարձակ տիրուհի են այն մարդկանց, որոնց
իրենց առագաստը բաժանելու պատուին են արժանացնում,
թէև բազմակնութիւնը, անզուսպ հարճապահութիւնն և կա-
նանց ստրկութիւնն երկրի մէջ սովորական են:

Յիշեցինք Նիւբիացիների երեք քառորդի ամուսնութիւ-
նը: Հիւսիսային Ա.ֆրիկայի միւս ծայրում, Մարոկկոյի հրէա-
ների մէջ գտնում ենք ժամանակաւոր ամուսնութիւններ,
ըաբբից օրհնուած, երեք, վեց ամսուայ համար: Մարդը
միայն մի նուէր է տալիս և պարտաւորում է պայմանամի-
ջոցում եղած որդին իրեն համարել:

Հայիտում և Հաբեշտանում այսօր էլ ապրում են ա-
զատ ամուսնութեամբ, և արդէն Հերոդոտի ժամանակ եթով-
պական մի քանի տրիբուներ ամուսնութիւն չէին ճանա-
չում: Գիտենք, որ Հաբեշտանում, հակառակ քրիստոնէական,
կամ այսպէս կոչւող կրօնի, քմքերի հսմեմատ միմեանց առ-
նում, թողնում են: Բրիւսը տեսել է մի Հաբէշ կին իւր նախ-
կին եօթն ամուսիններով շըշապատուած: Միւնոյն և Հայի-
տում, օրինաւոր միակնութեան կողքին ազատ միութիւն-
ներ կան, որ բոլորովին անպատուաբեր չեն համարւում, այլ,
այսպէս ասած, աղայական (place) են: Միմիայն ամենապատ-
ուաւոր մարդիկն են ունենում այսպիսի ազատ միութիւն-
ներ: Եւ դրանից ծնած երեխաները հարազատ որդիներին
հաւասար իրաւունք ունին, և այս աղայականներն (places)
աւելի քիչ են բաժանում, քան թէ ամուսնացած մարդիկ
ապահարզան տալիս:

Նախընթաց ասածներից շատ դժուար է մի ընդհա-
նուր տեսութիւն գծել ամուսնութեան սկզբնաւորութեան և
զարգացման մասին, բայց մենք էլ դեռ շատ հետազոտու-
թիւններ ունինք անելու: Տեսնենք թէ Ամերիկան, Պոլինե-
չիան, Ասիան և Եւրոպան մեզ նոր փաստեր կը տան:

Ե.

ԸՄՈՒՄՆՈՒԹԻՒՆՆ ԸՄԵՐԻԿԱՑՈՒՄ.

Ապուշ Ֆուէժների մէջ երիտասարդը հէնց որ որսոր-
դութիւն անելու կարող է դառնում, հէնց որ իմանում է
շինել կամ գողանալ կեղեկի մի կոպիտ մակոյկ, որով նա ծա-
ռայում է իւր յեղին, իսկոյն իրաւունք է ունենում մի կին
ւնենալու, որն և սովորաբար փախցնում է, բայց Ֆիդցըրուա-
յի գրուածքը ցոյց է տալիս որ նա դիմում է իւր հրոսի (hord)
աղջկան և օտարացեղ առևանգումն տեղի չի ունենում:

Համընտանի առևանգում կատարւում է և Արօգանօների
մէջ, ուր կանայք միշտ պաշտպանում են աղջկան քարերով
և գաւազաններով և ուր ծնողների ընդդիմութեան ժամա-
նակ փեսացուն որսորդական փողով հաւաքում է բարեկամ-
ներին աչքը ձկած աղջկան որսալու: Այս համընտանի առե-
ւանգումը չի արգելում միանգամայն և օտարացեղ աղջիկ
փախցնելու: Այնքն աշխատում են կարելիի չափ շատ բան-
տարկեալների հարեմ սարքելու և իրենց տրիբունի մէջ իս-
կական կամ շինծու առևանգումը չի խանգարում շատ թէ
քիչ վճարելու կնոջ համար: Նարբիւասների մէջ, որոնք նախ-
ական բոլոր յեղերի պէս բազմակին են, առաջին կինն իշ-
խանութիւն է ունեցել միւսների վրայ, որ շատ սովորա-
կան է:

Այս Հնդիկների, ինչպէս և Հարաւային Ամերիկայի բնիկ-
ների մեծամասնութեան մէջ, սերական միութիւնը զուտ քա-
ղաքական և շատ անգամ սոսկ առևտրական մի գործ է ե-
ղել, որ մարդու քէֆն ուզած ժամանակ դադարում էր. այս-
տեղ ամուսինը բոնակալ իշխանութիւն ունէր կնոջ վրայ,
որովհետեւ Մոքսուների մէջ նա իրաւունք ունէր սպանելու
նրան, եթէ վերջինս երեխան վիժէր:

Միւնոյն բազմակնութիւնը, կանանց միւնոյն ստրկու-
թիւնը, ծանրաբեռնուած երկրագործական աշխատանքներով
ու կոռով, հանդիպում ենք Գարանիացիների մէջ. նոյնպէս

առևանգումը. միւնոյն պատճառը նրանց մեծամասնութեան պատերազմների և գաղթականութեան: Բայց այս առևանգութիւնների գրդեչը ոչ թէ գէպի օտարացեղ աղջկներն զգացած սէրն է, այլ միայն շատ կանալք ունենալու ցանկութիւնը: Ընդհակառակն երկուստեք հաւանութեամբ միութեան ժամանակ համընտանի և նոյն խոկ ազգակցական ամուսնութիւնն կանոն է Հարաւային Ամերիկայի տրիբուներից շատերի մէջ:

Այսպէս էր կարահըների մէջ և սրանք ամուսնանում
էին իրենց ազգականների հետ առանց խտրութեան, բայցի
իրենց քոյլերից: Սակայն ուրիշ տեղեր այս յարաբերութիւնը
փոխուում է: Այսպէս Գուշնէի Հնդիկները որ բազմակին են,
չեն կարող ամուսնանալ իրենց հետ միևնույն անունը կրող
գերդաստանի մի որևէ անդամի հետ. բայցի սրանից, երեխան
պատկանում է մօր գերդաստանին և կրում է միևնույն ա-
նունը: Թէվէի ասելով Բրեցիլիացիք այս մասին բոլորովին
հակառակ գաղափար ունէին: Նրանց կարծիքով, սերնդի յա-
ռաջացման մէջ հայրն է գլխաւոր գեր կատարում, իսկ մայրը
երկրորդական: Ոչ մի միակերպութիւն չկայ Բրէզիլի ամուս-
նական սովորութիւնների մէջ, ասում է Մարտիուսը, սովո-
րութիւնն, իսկապէս, յառաջանում է անհրաժեշտութիւնից:
Կղզիացած փոքրիկ տրիբունների մէջ ամենամօտ ազգական-
ներն անգամ ամուսնանում են միմեանց հետ. ընդհակա-
ռակը բնակութեամբ հարուստ վիճակներում օտարացեղ ա-
մուսնութիւնը կանոն է դառնում: Եւ այս կատարում է
ամբողջ երկրի վրայ: «Անհրաժեշտութիւնը օրէնք է դնում»,
ասում է ֆրանսիական հին առածը: Այսպէս՝ թէև բազմա-
կնութիւնը հարաւային Ամերիկայում ընդհանրացած է, բայց
պէտք էր որ Օտոմաքները բացառութիւն կազմէին, չնայե-
լով, որ աւելի քիչ զարգացած են:

Յիշենք նաև, որ Հարաւային Սմերիկալի բնիկները, ինչ-
պէս վայրենի ազգերի մեծամասնութիւնը, աղջկների ողջա-
խոհութիւնը սաստիկ քիչ են զնահատում։ Ոչ ոք այդ մա-
սին ոչ հօգս է քաշում և ոչ դարդ անում, մինչև որ ադ-

զիկը դառնում է մինի սեպհականութիւն։ Այնուհետեւ արդէն կնոջ մոլորեցնողին սաստիկ պատժում են, մինչեւ անգամ սպանում, եթէ կամենում է կնոջ գլխատէրը, բայց, ինչպէս ասում է Թէվէն, Բրէզիլիայում պատիժը միայն կնոջն էր հասնում։ Մարդուն խնայում էին վրէժինդրութիւնից վախենալով։

Հիւսիսալին Ամերիկայում ամուսնական սովորութների մէջ ոչ մի միակերպութիւն չկայ: Կալիֆորնիայի բնեկների մէջ համարեած խառնակեցութիւն է տիրում: Այդտեղ զուգաւորում են առանց մի որևէ ձեւականութեան, և մինչեւ անգամ նրանց լեզուի մէջ «ամուսնութիւն» խօսքը չկայ: Կսնալիք կարծես պատկանում են իրենց տոհմի (clan) բոլոր մարդկանց և որանց նախանձը շարժւում է միայն ժամանակ, երբ կանալիք մի ուրիշ հրոսակի (hord) մարդկանցից են սիրահար ընտրում: Ընդհակառակը ծիլուի Կոլորադոյի և Նոր Մեքսիկայի շատ ժողովուրդներ (տրիբու) միակին են և չնութիւն նրանց մէջ շատ հազիւ է պատահում և սաստիկ նախատուում է: Միւս բոլոր տեղերում բազմակնութիւնը թուլատրում է այն բոլորին, որոնք բաւական հարուստ են շատ կիներ ձեռք ձգելու, գնելով նրանց կամ ուրիշ միջոցներով: Բայց կարմրածորթների ամուսնութեան ընդհանուր ձեզ օտարացեղ ամուսնութիւնն է: Այն ընկերաբանները (սոսիօլոգ), որ պ. Լեննանի (Սկզբնական ամուսնութիւն) պէս կամենում են այստեսակ ամուսնական միութիւնն ամբողջ մարդկութեան համար ընդհանուր մի շրջան համարել, իրենց բոլոր, ամենահամոզեցուցիչ փաստերը վերցըել են Հիւսիսալին Ամերիկայի սովորութիւններից:

Առհասարակ կարմրամորթ ժողովրդները (tribes) բաժանուած են շատ տոհմերի (clan) որոնցից իւրաքանչիւրն ունի իւր տոհմանշանը, իւր տոտեմը (totem). և միևնույն տոտեմն ունեցող՝ մարդկանց մէջ ամուսնութիւնն սովորաբար արգիլուած է։ Այս սովորութիւնն որ արդէն լիշել է Շարլվուան, Հաստատել են շատ ճանապարհորդներ։ Եւ սա իսկամբես մի օտարացեղ ամուսնութեան հետեանք է, որ ծա-
կամբես

գել է բացառապէս մայրական յաջորդութիւնից (filiation) որովհետև երեխաներն ընդունում են իրենց մօր տոտեմն և պատկանում են նրա տոհմին:

Նէլէն, ծօվա, Կաւ, Օզաժ, Բլակքէլէ, Կրէ, Մինսիտարի, Կրով և այլ ժողովրդների մէջ օտարացեղ ամուսնութիւնը խառնում է համահայր բազմակնութեան հետ, որովհետև մեծ քրոջ ամուսինն իրաւունք ունի ամուսնանալու իւր քենիների հետ և սրանցից իւրաքանչիւրը համարւում է մեծ քրոջ երեխաների մայր: Արդեօք այս խաղաղ օտարացեղ ամուսնութիւնը յաջորդել է առեանդմամբ օտարացեղ ամուսնութեան թէ ոչ: Հաւանական է. գոնէ միքանի վայրերում, օրինակ Կանադայում, ուր ամուսինը ցեղապետի մօտ պսակը կատարելուց յետ, տանում է կնոջը իւր վրանը ներկայ եղողների ցնծութեան աղաղակներով: Նկատենք անցողաբար, որ այստեղ ամուսնութիւնն այլ ևս մի անհատական գործողութիւն չէ, այլ արդէն հասարակական մի բան, որ ցեղապետը պիտի հաստատէ:

Սակայն և այնպէս՝ սրանով ամուսնութիւնը չի ազատ-ւում առեւտրական մի գործողութիւն լինելուց: Ամուսինը պարտաւոր է գնել իւր կնոջը և եթէ միջոց չունի, պիտի ջանալ նշանադրուել և մի որոշ ժամանակ ծառայել աներանց և նրանց համար որսալ, մշակել, մակուկներ փորել: Միքանի ժողովրդների մէջ զանազան պարտաւորութիւններ կան, այսպէս, օրինակ, ամուսինն իւր որսից տասաներորդ պիտի վճարէ աներանց, մինչև որ մի աղջիկ ունենալ, որ դառնում է նախ սեպհականութիւն և ապա կին իւր մօրեղբօրը:

Կարմրամորթների մեծամասնութեան մէջ տիրող օտարացեղ ամուսնութեան կարգը, որին ենթակայ են սերական միութիւնները, տպացուցանում է, որ այս ցեղն արդէն ձրգտում է ամուսնութիւնը հասարակական մի գործողութիւն դարձնել. սակայն այս ձրտումը գեռ շատ թոյլ է: Եւ լիրաւի, այս ժողովրդների մեծամասնութեան մէջ ամուսնութիւնը կատարւում է առանց վկաների, առանց պաշտօնեա-

ների, առանց քահանաների. սա մի անհատական դործ է և յաճախ մի հասարակ զուգաւորութիւն: Տիննէի բնիկները մինչև անգամ «թանգագին», կամ «սիրելի» խօսք չունէին, ալիսնքին բարբառը «սիրել» բայց չունէր: Ամերիկական բարբառներն իւրաքանչիւր տրիբունի մէջ տարբեր և կարմրամորթների ամուսնութիւնը սովորաբար օտարացեղ լինելով՝ ամուսինները շատ անգամ սաստիկ տարբեր լեզուներով են խօսում և շատ անգամ բաւականանում են նշաններով միայն իրենց միտքը միմեանց հազորդելու, և նրանց բարոյական մտերմութիւնն էլ այնքան թոյլ է, որ երկար տարիներ միասին ասլրելով, միմեանց լեզու յեն սովորում: Ամէն տեղ մարդը բազմակին է, եթէ միայն կարելի է: Ապաշների մէջ որքան շատ կին ունենան, այնքան աւելի պատիւ կը ստանան, և կրօնն էլ դրան հաւանութիւն է տալիս. այսպէս՝ Շիպիկուայներն ասում են թէ բազմակնութիւնը Մեծ Ոգուն դուրեկան է: Կարմրամորթներն էլ Հոտտենտոտների նման ամուսնանում են շատ վատաղ, տաս, տասերկու տարեկան աղջիների հետ և սերական յարաբերութիւնը տեսում է ինչ-քան որ հաճելի է գլխատիրոջը, որովհետև նա իրաւունք ունի ամենաչնչին պատճառով, կամ նոյն խոկ առանց պատճառի յետ ուղարկել իւր կնոջը: Ամուսնացած կնոջից ողջախոհութիւն պահանջուում է այնքան՝ որքան տէր ունեցող սարկուհուց: Նատչէսները, որ սակայն ամենազարգացած ժողովրդներից մին են, առանց դժուարութեան իրենց կանացը փոխ էին տալիս բարեկամներին: Նաև, Հեարնի տաելով, երկու աղջոնքին բարեկամներ մի գիշերուայ համար փոխում են միմեանց հետ իրենց կիները: Նանդովէսների մէջ ազատ կինն իրեն պատիւ է համարում մի խնջուքից լիտոյ նուիրուելու տրիբունի բոլոր նշանաւոր զօրականներին և այսպիսի մի շահատակութիւն միշտ ապահովում է նրան բարձր դաստիարակից մի ամուսին գտնելու:

Կին գնելը գեռ բաւական չէ, որ կարմրամորթն օրինաւոր տէր դառնայ իւր ստացուածքին: Նատ վիճակներում ամուսինը պէտք է միշտ պատրաստ լինի իւր իգական սեպ-

Հականութիւնը պաշտպանելու: Կարմբամորթների հիւսիսային բնակավայրում մարդիկ բոռնցքով խլում են միմեանցից կիները և հէնց որ մինը քաջ որսորդ է դառնում, այլ ևս թոյլը հազիւ է կարողանում պահել մի կին, որ սա ցանկանում է սեալհականացնել: Այս բոլոր փաստերը բաւական ապացուցանում են, որ բազմակնութեան հակառակ ամուսնութիւնը կարմբամորթների մէջ գեռ բոլորովին չէ կարգաւորուած և բացի դրանից այս բազմակնութիւնը նշանաւոր բացառութիւններ է թոյլ տալիս: Այսպէս՝ Նիպաէուայները շատ անգամ ամուսնանում են իրենց քոյլերի, իրենց աղջիկների հետ և երեմն էլ կենակցում իրենց մայրերի հետ: Միենոյն Հնդիկներն ստիպում են մարդուն ամուսնանալու եղբօր այլրի հետ, մինչ իսկ եթէ բազմակնութիւնն ընդունուած կամ ընդունուած լինէր: Այս նշանաւոր լեվիրա (levirat) սովորութիւնը սաստիկ տարածուած է ուրիշ շատ ժողովուրդների, նոյն իսկ շատ ցեղերի մէջ, եթէ չխօսենք դեռ Հրէաների մասին:

Այս լեվիրա ըստ մեր եւրոպական բարոյականութեան ազգապիշտ սովորութիւնը իւր գոյութեան իրաւունքն ունի քաղաքակրթութեան սկզբնական շրջաններում ամէն տեղ՝ ուր թողնուիլը կնոջ համար մահուան հաւասար է: Այս մի հրահանգիչ փաստ է, որ ցոյց է տալիս թէ բարոյականութիւնն իւր բուն էութեամբ անհրաժեշտօրէն ծագում է օգտակարութիւնից: Այսպէս՝ վայրենի ժողովուրդների մէջ կանաց ծննդաբերութիւնը սովորաբար կարճ է տևում, հետեւքար՝ լեվիրա սովորութիւնն պէտք է նրանց նպաստաւոր լինէր գոյութեան կոռու մէջ:

Էսքիմոսները, որոնց հասարակական սովորութիւններն այնքան կողմերով հետաքրքիր են, կարծես թէ երեմն քիչ թէ շատ գործադրել են բազմակնութիւնը, եթէ առեւանգմամբ ամուսնութիւնն այս սովորութեան մնացորդ նկատուի, որ հաւանական է: Եօրդ հրուանդանի, ինչպէս և Գրէոլանդիայի էսքիմոսները նախ երկուստեք համաձայնութեամբ ամուսնութեան խօսք են կապում ազգականների հետ, ապա մի շին-

ծու առեւանգում սարքում, որի ժամանակ աղջիկն ընդդիմադրութիւն է ցոյց տալիս, որ սովորաբար նոյնպէս շինծու, կեղծ է լինում: Միօրինակ սովորութիւններ գտնում ենք և կամչադալների մէջ, որ այնքան նման են Ամերիկայի էսքիմոսներին: Այս էսքիմոսների սերական յարաբերութեան սովորութիւնները չափից դուրս ազատ են: Սրանց հարեւան նուտկա-կոլոմբացիների ցեղապետները սովորութիւն ունեին իրենց կանաչը միմեանց հետ փոխելու: Գրոէլանդացիների մէջ կինը կամ կանաչը բարեկամին փոխ տալը մի գովելի գործ և ազնիւ բնաւորութեան ապացուց էր համարւում: Էսքիմոսների մէջ կարելի է կինը միքանի ամսով փոխ տալ սա փոխատուի դէպի բարեկամն զգացած համակրութեան մի առանձին առհաւատչեան է, միայն այս վերջինս պէտք է վերագրածնէ փոխառած կինը կտմ կանաչը ճիշտ պայմանաժամին, եթէ փոքր ի շատէ ազնուաշնորհ մարդ է: Ուրիշ տեղեր էսքիմոսները միաժամանակ գործադրում են թէ բազմակնութիւն և թէ բազմայրութիւն: Ոսսսի ուսումնասիրած միքանի ժողովրդների մէջ բազմակնութիւն թուլատրւում էր միայն կանանց ամուլ եղած միջոցին: Եւ լիրաւի, էսքիմոսների մէջ երեխաները հարստութիւն են համարւում. Նրանք օգուտ են տալիս հէնց ութ տարեկան հասակից և պահում են իրենց ծնողներին ծերութեան ժամանակ. և մի այլի կին այնքան աւելի հեշտութեամբ է ամուսնանում, որքան աւելի շատ սերունդ է յառաջացրել:

Այս բոլոր ասածներից կարելի է եղլակացնել, որ երկու Ամերիկաների վայրենի ժողովրդների մէջ սերական յարաբերութիւնը քիչ կամ բոլորովին կանոնաւորուած չէ, և որ այս ընդարձակ երկրի մէջ ամուսնութիւն խօսքին իսկապէս արժանի ոչինչ չկայ: Միայն քաղաքակրթուած հասարակութիւնների մէջ է, որ ամուսնութիւնն օրինաւորւում և մի որոշ կազմակերպութիւն է ստանում: Եւ սա հասել էր այդ աստիճանին նախկին Մեքսիկացիների մէջ, որոնց մասին և պէտք է այժմ խօսենք:

Զ.

ԱՐՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ ՄԵՔՍԻԿԱԾՈՒՄ ԵՒ ՊԵՐՈՒՈՒՄ.

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ Ա.մերիկայի մեծ պետութիւնների մէջ, որոնց հասարակական կազմակերպութիւնը շատ բազմակողմանի էր, սերական յարաբերութիւններն այլ ևս չէին համարում զուտ անհատական գործառնութիւններ: Պերուում, ուր բոլոր բնակիչներն Խնկային մի տեսակ սեպհականութիւն էին, ուր մարդը ճնշուած էր բազմաթիւ կանոններով և անասունի պէս շահագործուում էր, ամուսնութիւնը կառավարչական մի գործ էր դարձել: Ա.մէն տարի Կուցկոյի ամբողջ պետութեան մէջ երկու սեռի բոլոր մարդեկը հաւաքուում էին քաղաքների ու գիւղերի հրապարակների վրայ ամուսնանալու: Կուցկոյում Խնկան անձամբ մի հասարակական տեղում պսակում էր իւր գերդաստան անձերին, զոյգերի ձեռքերը միմեանց տալով: Նոյնն անում էր իւրաքանչիւր վիճակի գլխաւորը կամ Կիւրականը իւր վիճակում իրեն հաւասար կամ ստորագրուած անձանց վերաբերմամբ: Ասում են, թէ ծնողների համաձայնութիւնն անհրաժեշտ էր, իսկ զուգակցողներինը՝ ոչ: Օրէնքով՝ ամուսնացող տղամարդը պիտի լինէր 24—26, իսկ աղջիկը՝ 18—20 տարեկան: Ա.մբոխն ենթարկուած էր միակնութեան, իսկ բազմակնութիւնը մի զուգս (luxe) էր, որ միայն հարուստներին և Խնկային էր վերապահուած: Եւ այս վերջինս մեծապէս օգտուում էր այդ արտօնէութիւնից, որովհետեւ վերջին Խնկա Մոնտեզուման երեք ազար կին կամ հարճ ունէր: Հիւսիսային Ա.մերիկայի օտարացեղ ամուսնութեան սովորութեան հակառակ համընտանի ամուսնութիւնը մի անժխտելի կանոն էր Պերուում: Խիստ արգելուած էր ամուսնանալ իւր վարչական խմբին չպատկանող մի օտար անձի հետ, հետեապէս և ամուսնութիւնը շատ անգամ ազգականների մէջ էր կայանում. միայն Խնկան ամուսնանում էր իւր քըոջ հետ, միայն թէ սա միենոյն մօ-

րից չպիտի լինէր: Սակայն այս ազգապիղծ սովորութիւնը հետզհետ թուլարուեց և տէրութեան մեծամեծներին:

Պերուցիների ամուսնութեան մէջ կառավարութեան միջամտութիւնն իւր լաւ կողմն էլ ունէր: Վիճակի ծախսով նոր զոյգի համար մի բնակարան էր պատրաստում և մի ուրոշ տարածութեան հող յատկացնուում նրանց ապրուստի համար: Սա իշխանական համայնութեան ամենախիստ տեսակն էր: Եւ սա է իսկապէս որպէս տիպ ծառայել եզրութեան Ա.մերիկայի զանազան կողմերում քարոզչական վայրեր հիմնելուն: Սակայն եզրութեան Խնկաներից աւելի հեռու են գնացել, որովհետեւ Մոքսոս և Շիքիտոս գաւառներում նրանք հագու էին քաշում պատարագից մի ժամ առաջ արթնացնել տալու ամուսիններին, առանց ստիպելու վեր կենալ: Տարօրինակ գործադրութիւն Աստուածաշնչի պատուիրանին, թէ «Ո.ձեցէք և բազմացէք»:

Կիւրական հաստատելով ամուսնութիւնը՝ ամուսիններին ամուսնական հաւատարմութեան երդում էր տալ տալիս, որ ընդհանրապէս, ըստ Պիզարրի, պահում էին, որովհետեւ օրէնքը ծանր պատժում էր շնացողին: Քիտոյում, ուր օրէնքը չէր միջամտում սերական յարաբերութիւններին, ուր ամուսինները կարող էին բաժանուիլ փոխադարձ թեթև համաձայնութեամբ, այնուամենալիւ շնացող կինը կենդանի թաղուած էր իւր մեզսակցի հետ: Սակայն և այնպէս, թւում է, թէ Քիտոյում, ինչպէս և Կուցկոյում, օրէնքը հսկում էր առաւելապէս ամուսնացած կանանց վարքի վրայ, որովհետեւ կու պետութիւնների մէջ ևս խառնակեցութիւնը թուլարուած էր:

Մեքսիկայումն էլ միակնութիւնը կանոն էր. 'ի հարկէ, հարուստները կարող էին շատ կին ունենալ, բայց միայն մինն էր օրինաւոր համարւում և միայն նրանից ունեցած որդիներն էին հայրական տիտղոսի և ստացուածքի ժառանգ համարւում: Լեզիրան օրինաւոր էր, մինչև անգամ երբ ննջեցեալի եղբայրն արդէն ամուսնացած էր:

Մեքսիկայում հարսանիքը կատարուամ էր մեծ շքեղու-

թեամբ, ծնողների երկուստեք համաձայնութեամբ և առանց քաղաքալին իշխանութեան միջամտութեան: Օտարացեղ ամուսնութեան ոչ մի հետք այլ ևս չկար Մեքսիկայում, շինծու առևանգման ոչ մի ծէս էլ չէր պահպանուած, ընդհակառակը հարսը մեծ հանդիսով տարւում էր փեսալի տունը, ուր նրան ընդառաջ էին ելնում փեսան և նրա գերդաստանը: Իրար հանդիպելիս փոխադարձաբար ինկարկում էին խընկամանով, ուր խունկ էր ծխուում: Ապա հարսն ու թագուորը գնում նստում էին մի խսիրի զրայ և մի քահանայ նրանց պսակում էր՝ հանգուստելով հարսի հանդերձի մի ծայրը թագուորի վերարկուին: Եւ այնուհետև կինը պատկանում էր ամուսնու գերդաստանին:

Աւելացնենք, որ հարսանիքը չէր կատարւում, մինչեւ որ աստուածների կամքը չհարցնէին և զանազան գուշակութիւններ անել չտային: Հարսանիքը տեսում էր չորս օր, առանց ամուսնացողների մասնակցութեան և այս միջոցում խստիւ արգիլուած էր նորապսակներին առագաստ մտնել: Ակզբունքով ամուսնութիւնը ոլիտի տեէր մինչև մահ, բայց ապահարզանն ընդունուած էր և մինչև անգամ մի մասնաւոր ատեան կար դրան վերաբերեալ բոլոր հարցերն լուծելու: Երեք անգամ ատեան ներկայանալուց և մանրամասն քննուելուց յետ՝ իրենց որոշման մէջ հաստատ մնացող ամուսիններն արձակուում էին առանց մի որևէ դատավճուի և միայն այսպիսով այնուհետև դառնում էին ազատ և ընդ միշտ բաժանուած: Այսպէս ուրեմն օրէնքն որոշակի ապահարզան չէր տալիս, այլ միայն ներողամիտ էր գտնուում:

Ամերիկայում տեղի ունեցած ամուսնութիւնների մասին մեր այս հակիրճ տեսութեան մէջ աշխատեցինք յիշելու ամենահետաքրքրականներն ու ամենանշանաւորները: Անկասկած սրանցից շատերն անբաւարար են, որովհետեւ Ամերիկայի բընկները կամ չունին պատմութիւն և կամ ունեցածն էլ առասպելական, թերի և շատ հին չէ: Սակայն և այնպէս բոլոր այս փաստերը կարծես լաւ ապացուցանում են, որ Ամերիկայում ևս ամուսնութեան կարգը կանոնաւորապէս չէ

գարգացել և որոշ շրջաններով չէ անցել: Իւրաքանչիւր ժողովուրդ, իւրաքանչիւր բնիկ խումբ նայել է իւր կարիքներին և ներշնչումներին և մեծ ազգերը, որ մօտաւորապէս Մեքսիկացիների ու Պերուցիների չափ քաղաքակրթուած էին, իրենց ամուսնութեան կարգերը կարգաւորել էին իւրաքանչիւրն իւր կերպով և միմեանցից սաստիկ տարբեր ձեւերով:

Այս և շատ ուրիշ այսպիսի փաստեր ապացուցանում են, թէ այժմ որքան վաղ է կամենալ գիտնական օրէնքների նըման որոշ ու մէկին սոսիալական օրէնքներ ձւակերպել: Հաւաքել փաստերը, նրանց դասակարգել և խոհեմութեամբ փորձել մի քանի ընդհանուր տեսութիւններ հանել և առաջարկել այն վերաբննութեան, ահա մօտաւորապէս ինչ որ կարող ենք մեզ թոյլ տալ սոսիօլոգիկական փորձերի մէջ:

Է.

ԸՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ ՊՈԼԻՆԵԶԻԱՑՈՒՄ.

Համարեա ամբողջ Պոլինեզիայում կանայք և չամուսնացած աղջիկներն ազատ էին նուիրուելու ամէն սիրտն ուղածին և հէնց մանկութիւնից սկսած համարեա երբէք յետ չէին կենում դրանից: Մարքիզեան կղզիներում և մասամբ ամէն տեղ աղջկները տասերկու տարեկան հասակից սկսած անձնատուր էին լինում տնտակութեան: Եւ այսպիսի կեանքի շնորհով ծննդաբերութիւնը բաւական թոյլ էր և յդի աղջիկն իսկոյն դառնում էր քսան ամուսնացող: Սակայն միքանի կղզիներում և լատկապէս Ռոտումայում աղջկների կուսութիւնը սաստիկ գնահատուում էր և ամուսինն իրաւունք ունէր այս պատճառով թողնել կնոջը: Եւ այն աղջիկները, որ կարողացել էին պահպանել իրենց կուսութիւնը, այն ցոյց էին տալիս, սնգուրելով իրենց ճակտոր բուստի կըով և այտերը կարմիր ներկելով:

Բաւական տարօրինակ է, որ Պօլինեզիայում ուր կրօնական ծէսերը միջամտում էին կեանքի ամէն՝ մի գործողութեան, ամուսնութիւնը կամ աւելի լաւ ասած, սերական յարաբերութիւնն ոչ մի ծիսակատարութեան տեղիք չէր տալիս, սա զուտ անհատական մի գործ էր, որ կատարում էր երկու ընտանիքի և առաւելապէս մի մարդու ու աղջկալ ծնողների մէջ, որոնց նա նուիրում էր խոզեր, կտորեղէններ և այլն։ Միութիւնը, որ իսկոյն կատարում էր ընտանիքներից մինի խուզում, սովորաբար տօնուում էր մի խընճուզով, որի ծախսը լինում էր մի խոզ։ Ամուսնանալուց յետ, կինն որքան էլ մինչեւ այն ժամանակ փոփոխամիտ եղած լինէր, չէր կարող այլ ևս անհաւատարիմ գտնուիլ իւր ամուսնուն՝ առանց սրա պատուէրին կամ թոյլտութեան, որ, սակայն շատ հեշտ էր գնել։ Այս ազատ ամուսնութիւնն ըստ կամս քակտելի էր. բաւական էր, որ մինը կամ միւսը կամենար, մանաւանդ երբ երեխաներ չէին լինում. իսկ եթէ լինում էին, բաժանուելիս՝ սրանք երկուստեք համաձայնութեամբ մնում էին կամ հօրը և կամ մօրը։ Ամուսինն առանց իւր թոյլտութեան շնացող կնոջ պատժում և երբեմն սպանում էր, որովհետեւ նա իւր սեպհականութիւնն էր։ Նոր-Զելանդիայում հայրը կամ եղբայրը տալով իւր աղջիկը կամ քոյրը փեսալին, ասում էր. «Եթէ անբաւական մնաս դրանից, ծախիր, սպանիր, կեր դրան։ Դու դրա կատարեալ տէրն ես։» Հասարակական կարծիքն ամենայն խստութեամբ դատապարտում էր ոչ թէ շնութիւնը, այլ իրենից ստորի հետ ամուսնութիւնը։ Իրենից բարձր դասակարգի մի կնոջ հետ յարաբերութիւն ունենալ՝ կը նշանակէր գլխից ձեռք վերցնել։ Արիստոկրատիալին պատկանող կինը տատուած էր մի հասարակ մարդու համար և արգելուած նրանց հետ ամուսնանալու։

Սղջիկը մարդու գնալուց յետոյ էլ հօրից կախումն ունէր և երբեմն սա, ստացած նուէրներից դժգոհ, նրան յետ էր առնում աւելի գնով ծախելու։

Բազմակնութիւնն ամէն տեղ թոյլտուած էր. մանա-

ւանդ հարուստներին, իսկ հարճեր կային ու կային։ Մասնաւորապէս Սամոյառում ցեղապետները հիմնում էին բազմաթիւ հարեմներ, որ վերափոխում էին իրենց հաճուքի համեմատ։ Յաճախ սիրուհիներ, որոնցից տէրերը ձանձրացած էին լինում, ստիպում էին ծառայելու մի տեսակ հիւրանոցներում, ուր օտարականը ձրի ապաստանելով, գտնում էր ուտեստ, օթեան և սէր։ Վերջապէս լեվիրան օրինաւոր էր այս կղզիներում էլ, ինչպէս ուրիշ այնքան կողմերում։

Մարքիզեան կղզիներում կային բազմայր կանաչք, որովհետեւ պօլինեզիացիները նախապաշարուած չէին սերական յարաբերութեանց մասին։ Ելլիսը պատմում է նոյն իսկ ցեղապետների հետ ամուսնացած բազմայր կանանց մասին։ Հաւայի կղզիներում եղել են նոյնպէս սահմանագրական ամուսիններ, որ թագաւորում էին առանց կառավարելու և որ միայն օրինաւորում էին իրենց կանանց գաւակները։

Եզրօր ու քրոջ միմեանց հետ ամուսնութիւնը, որ բաւական քիչ պատահում կղզեաց (archipels) շատերում, և այն էլ ազնուականների մէջ, ստոր դասակարգի հետ խնամանալուց խոյս տալու նպատակով, շատ սովորական էր Հաւայի կղզիներում։ Նոյնպէս շատ անգամ այս կղզիներում եղբայրներն ու նրանց կանաչն անխտիր առում էին միմեանց հետ։

Պօլինեզիացիների ամուսնական սովորութիւնների մէջ տիրող մեծ ազատութիւնը տիրում էր և նոր-Զելանդիայում համընտանի ամուսնութեան հետ միասին, որին նման է Սանդվիչեանցիների ազգապիշտ ամուսնութիւնը։ Նոր Զելանդիսում սաստիկ արգելուած էր մի ուրիշ ժողովրդի պատկանող կնոջ հետ ամուսնանալ կամ նրան գնել և պէտք էր քաղաքական մի զօրեղ պատճառ լինէր, որ այդ արգելքը վերցուէր։ Սակայն նոր-Զելանդիայի համընտանի ամուսնութիւնը միացած էր առևանգման և շինծու կոռու, մէկ խօսքով առևանգմամբ ամուսնութեան բոլոր ծէսերի հետ, մի հրահանգիչ վաստ, որ ցոյց է տալիս ամուսնութեան զարգացման այսպէս վաղ և շտապով արած տեսութիւնների ոչնչութիւնը։

Ուրեմն, առևտանգմամբ ամուսնութեան ծէսն օտարացեղ ամուսնութեան մի նշան կամ մնացորդ չէ, ինչպէս այդ պընդում է Պ. Լեննան: Նաև համընտանի ամուսնութիւնը մասնաւորապէս խաղաղասէր ցեղերին յատուկ չէ, ինչպէս այդ կամենում է Սպենսերը, որովհետեւ ոչ մի ցեղ Զելանդացիներից աւելի պատերազմասէր չէր:

Բ.

ԱՐԹՈՒՐԻԹԻԻՆԸ ՄԵԼԵԳԻՇՅՈՒՄ.

Մենք կը յիշենք միայն Խաղաղ ովկիանոսի մոնղոլաբնակ կղզեաց խմբերի (archipels) ամուսնական սովորութիւնները: Բազմակնութիւնն այդտեղ ընդհանրացած է. կանալք սովորաբար գնուում են ծնողներից: Շնութիւնը կշամբւում և պատժում է, որպէս սեպհականութեան դէմ մի ոճիր: Նաև Կարոլինեան կղզիներում դաւաճանուած ամուսինը թոյլ է տալիս իրեն մի պատշաճ ընծայ ստանալով հաշտուելու, և չի դժուարանում իւր կինը կամ կանալքը փոխ տալու օտարականներին: Դատ և մասնաւորապէս Պելլեան կըղղիներում ամուսնութիւնը, պոլինեզիալինի պէս բոլորովին անհատական գործ է: Ֆիլիպպեան կղզիներում Սկիտասների մէջ դեռ պահպանում է առևտանգմամբ ամուսնութիւնը: Սիբահարը պէտք է պտրէ և գտնի անտառում իրենից մի ժամ առաջ մեկնած և թաք կացած ապագայ նշանածն և արել մայր չմտած բերէ տուն:

Ամուսնութեան ձևերն աւելի բազմազան և աւելի հետաքրքր են Մալեզիայում: Սումատրայում միաժամանակ տիրում էին ամուսնութեան զանազան սովորութիւններ: Նախ կինը կարող էր գնել մի մարդ, որ դառնում էր իւր աներանց սեպհականութիւնը. այս ընտանիքը պատասխանատու էր իւր գնած ամուսնու արածներին և սա 'ի տրիտուր աշխատում էր նրա համար, անձնական ոչինչ չէր ունենում

և միշտ կարող էր արձակուել. Երկրորդ՝ կինը և տղամարդը կարող էին հաւասար իրաւունքներով ամուսնանալ միմեանց հետ և երրորդ, մարդը կարող էր գնել իւր համար կին կամ կանալք: Այս ամուսնութիւնների կամ սրանցից մինի մէջ, որովհետեւ մանրամասնութիւնները մեզ յայտնի չեն, առևտանգման ծէսը պահպան էր:

Իսկ ինչ վերաբերում է Մալեզիայի համընտանի կամ օտարացեղ ամուսնութեան սովորութիւններին, ընդհանրապէս այս միայն կարելի է ասել, որ այս ահագին, բնակախիտ կըղղիներում սովորութիւնները շատ տարբեր էին և են դեռ ևս: Սակայն ծաւալի Կալանքները համընտանի ամուսնութիւն ունէին և նախքան մի աղջկայ հետ ամուսնանալը, պէտք է ստուգէին, թէ դա իսկապէս իրենց գերդաստանին է պատկանում: Իսկ Մալեզիայի արշակելագում, ուր բազմաթիւ ցեղեր միմեանց խառնուած են և տարբեր քաղաքակրթութիւններ միմեանց վրայ գարսուել, միւս բոլոր բաների նման, ամուսնութեան մէջ էլ միակերպութիւն չկայ:

Ռ.

ԱՐԹՈՒՐԻԹԻԻՆԸ ՀՆԴԿԱԾԱԾԱՆԻ ԲՆԻԿՆԵՐԻ ՄԷջ.

Հնդկաստանում արիական արշաւանքն, որ համեմատաբար նոր է, չոչնչացրեց նախկին, շատերի կարծիքով Եթովպանման (negrooid) կամ մոնղոլանման (mongoloide) ցեղերը, որ առաջուց բռնել էին երկիրը: Նա միայն քշեց նրանց լեռները, որից և յառաջացաւ նրանց պահարիա կամ պարիա (լեռնյի) կոչումը: Եւ որովհետեւ բրահմական տեսակէտով, այս բնիկներն իրենց ստորութեան պատճառով, անարժան էին յաղթողների քաղաքակրթութեան, ուստի սրանք կարողացան պահել իրենց հին սովորութիւնների մեծ մասը, որոնցից մանաւանդ ամուսնական ծէսերը շատ հետաքրքիր են:

Արդէն յիշել ենք Ցէլլոնի վեդահների միակնութիւնը, որ անկասկած պիտի վերագրել նրանց, մտաւոր կարողու-

թեան չափազանց ստորութեան պատճառով զոյդ զոյդ ցըրուած լինելուն։ Պարզ է, որ այս խեղճ մարդիկը համընտանի ամուսնութիւն պիտի ունենան, սակայն փոքր ինչ չափառուած է. այսպէս՝ ըստ Բայլէի, նրանք կարող են ամուսնանալ իրենց կրտսեր, բայց «չ երբէք աւագ քրոջ կամ հօրաքրոջ հետ։

Յէլոնից մինչև Տիրէտ փոքրիկ կղզիներից բնակիչներից շատերը, որ հին ցեղերի մնացորդներ են, գործադրում են բազմակնութիւն, որ շատ պատճառներով նախնական խառնակեցութեան նուազած և օրինաւորուած ձեւը պիտի լինի։ Եւ այս խառնակեցութիւնը դեռ մինչև այսօր մնացել է միքանի ժողովրդների և յատկապէս Սոնթալների մէջ, ուր ինչ պէս հին Պերուում, բոլոր պատկները միաժամանակ են կատարուում, տարին մի անգամ, վեց օր խառնակեցութիւնից յետու։ Այս սովորութեան կարելի է նմանացնել Յէլոնի «Համտեսի ամուսնութիւնը», որ տասնեհինգ օրուայ միութիւնից յետ կամ լուծուում և կամ օրինաւորուում է։

Նիտագոնդ համայնքների ժողովրդների ամուսնութիւնն ուղղակի անսասնական մի պարզ զուգաւորութիւն է, և միենոյն ժամանակ մի լարմար միջոց իւր ճաշը պատրաստել տալու, որովհետև դրան հետեւում է կնոջ ծառայութիւնը։

Հնդկաստանի Ռէդգիները 16—20 տարեկան աղջիկն ամուսնացնում են 5—6 տարեկան երեխալի հետ։ Յետոյ այս հարսը դառնում է կեղծ-փեսի մի հօրեղբօր կամ հօրեղբօր որդու և երեմն էլ հօր կինը։ Սակալն այդ փոքրիկ երեխան օրինաւոր հայր է համարւում իւր հարսնացու կնոջ երեխաներին։ Եւ երբ այս հաստատուած ամուսինը չափահաս է դառնում, նրա օրինաւոր կինն արդէն պառաւած է լինում, ուստի և սա 'ի տրտուր, սկսում է իւր հերթին ծննդնել երեխաներ մի ուրիշ ամուսնացած լամուկի հաշուին։

Մալաբարի նախրների, նիլգէրրի բլուրների Տագասների, հարաւային Հնդկաստանի Յերկալասների, Յէլոնի Յենդան գալացիների մէջ տիրում են բազմալրութեան զանազան ձեւեր, որ բաւական տարբերուում են միմեանցից և որոնցից միքանին ուղղակի կանոնակեռուած խառնակեցութիւն են։

Մալաբարի բնիկների բարձր դաս՝ նախրների մէջ կինը սովորաբար հինգ կամ վեց ամուսին է ունենում, բայց կարող է մինչև տաս, տասներկուուը ձեռք բերել։ Մինչև անգամ նրան թոյլ է տրւում կենակցիլ սրտի ուղածների հետ, միայն թէ դուրս չգայ տրիբունի և դասակարգի սահմանից։ Երբ ամուսինների թիւը սահմանափակուած է լինում, կինը հերթով տասնական օր կենակցում է նրանցից իւրաքանչիւրի հետ։ Եւ այս տարօրինակ կենակցութիւնն ընդհանրապէս շատ լաւ է անցնում։ Մէկ էլ, թոյլ է տրւում ամէն մարդու ամուսնական բազմաթիւ կապակցութիւնների մասնակցիլ։ Սերական այսպիսի կապակցութիւնն ամուսնութեան շատ պարզ ձեւի վերածած մի տեսակն է։ Տողացիների մէջ ամուսնացող աղջիկը հետզհետէ դառնում է ամուսնու բոլոր կրտսեր եղբայրների կինը, երբ սրանք չափահաս են դառնում և փոխադաբար այս վերջիններս ամուսին են դառնում այդ առաջին հարսի բոլոր կրտսեր քոյրերի, երբ սրանք արբուն հասակի են հասնում։ Այս, մեր սովորութեամբ, ազգապիղձ միութիւնների առաջին որդին ընծայւում է աւտգ եղբօրը, երկրորդը միջնակին և այլն։ Միենոյն տեսակի մի ուրիշ սովորութիւն տիրում է Յերկալանների մէջ, ուր մօրեղբայրը կարող է իւր քրոջ երկու առջիններ աղջիկներն իւր որդիներին կնութեան ուզել։

Յէլոնի Մինգալների մանաւանդ բարձր դասի մէջ բազմալրութիւնն ընդհանրացած է և միենոյն կնոջ ամուսինները գրեթէ միշտ եղբայրներ են լինում (Փ. Էմերսոն Պաւի)։ Այստեղ ոչ թէ անհատը, այլ գերգաստանն է ամուսնանում, և երեխաներն անբաժան նրան են պատկանում։

Հնդկաստանի Տոտտիարների մէջ կանայք հասարակօրէն պատկանում են եղբայրներին, հօրեղբայրներին և եղբօրորդիներին։

Հնդկաստանի այս հին ցեղերի մէջ տիրած բազմալրութեան հետ գոյութիւն ունի օտարացեղ կամ համընտանի ամուսնութիւն։ Այսպէս Տոդասները բաժանուած են հինգ գասակարգի, որոնց մէջ ամուսնութիւնն արգելուած է։ Ունիսն ուղղակի կանոնակեռուած խառնակեցութիւն են։

ըեւ շատ ժողովրդների մէջ, չի կարելի ամուսնանալ իւր տոհմին (clan) պատկանող աղջկայ հետ։ Իսկ Զոնտերի և միջին Հնդկաստանի միքանի ժողովութեաների մէջ ամուսնական ծիսակատարութիւնը մի կեղծ առեւանգումն է ներկայացնում։ Կարող ենք գտնել բազմայրութիւն Հնդկաստանի հիւսիսում ևս, Հիմալայի և Տիբէթի մոնղոլական, ինչպէս նաև մասամբ Կովկասեան ցեղերի մէջ։ Նոյն իսկ Մանուկի բրահմական օրէնսգրքի այն կանոնը, որ իրաւունք է տալիս եղբօրն իւր ամուլ հարսին բեղմնաւորելու, կարելի է նախկին բազմայրութեան մնացորդ համարել։ Բայց թէ այս բազմայրութիւնը միշտ և ամէն տեղ յաջորդել է խառնակեցութեան, մենք կը քննենք երբ վերջացնենք ամուսնութեան մասին ազգագրական այս տեսութիւնը։

Փ.

ԱՄՅԻՄՆՈՒԹԻՒՆԸ ՀՆԴԿԱ-ՉԻՆՑԻՆԵՐԻ, ԲԻՐՄԱՆՑԻՆԵՐԻ ԵՒ ՏԻՐԻԹՑԻՆԵՐԻ Մէջ.

Մոնղոլանման (Mongoloïde) Կոչինչինացիները, Կամբո-ջինացիները և Տիբէթցիները շատ ազատ վարք ունին, և կարելի է ասել, որ նրանց մէջ ամուսնութիւնը հազիւթէ գոյութիւն ունի։

Բիրմանիայում ամուսնական ծիսակատարութիւնը կայանում է միայն մի փոխադարձ խոստան մէջ, որ տալիս են ձէթի մէջ թաթախած թէլի մի տերեւից ճաշակելով։ Մէկ էլ, բաժանում են ամենաչնչին պատճառով ու համարեա առանց որևէ է ձեւակատարութեան։ Բացի սրանից, ամուսինն իրաւունք ունի սրտի ուզածի չափ հարճեր գնելու։

Մարկօ-Պօլոյի ժամանակ, Կոչինչինում ոչ մի կին իրաւունք չուներ ամուսնանալու, մինչև որ թագաւորը նրան չտեսներ և նրա վրայ չգործադրէր, եթէ, ի հարկէ, գուր գար, իւր «առաջին գիշերի» իրաւունքը։ Միայն այս դէպում, նա պարտաւոր էր նրան օժտելու։ Այդ ժամանակ թագաւորող միապետը ունէր 386 որդի։

Տասերեքերրորդ դարում, Կամբոջիի թագաւորը Պ. Ռը-միւզայի ասելով, ունէր հինգ օրինաւոր կին, որոնցից մինը տիկնանց տիկին էր և մի քանի հազար հարճ։ Մասնաւոր մարդիկ այնպէս ընտելացած էին արքայական բռնակալութեան, որ պարտականութիւն էին համարում իրենց աղջիկները պալատում ծառայութեան տալու, ինչքան էլ որ սրանք քիչ գեղեցիկ լինէին։ Ինչպէս հենց մեր օրերում ծապոնում դեռ սովորութիւն է, որ աղջիկները շատ անգամ չեն ամուսնանում, մինչև որ մի որոշ միջոց անառակ կեանք չը վարեն և սրանով նրանց պատիւը բոլորովին չի ընկնում։ Նաև Կամբոջիացի ամուսինը հաւատարմութեան համար իրեն նեղութիւն չի տալիս։ Մեզ այս տեղեկութիւնները տուող չինացի ճանապարհորդների ասելով՝ այստեղի կանայք տասերկու գիշերից աւելի միայնակ քնել չեն կարող, իսկ ինչ վերաբերում է ամուսիններին, նրանք ազատ էին սըրտերն ուզածի չափ հարճեր գնելու։

Այս անառակ երկրում աղջիկներն ամուսնանում էին 7-9 տարեկան հասակում և միայն աղքատներն սպասում էին մինչև տասեմէկ տարեկան հասակը Զիմ-Թան կամ օրինաւոր և կրօնական կուսապղծութեան եղակի սովորութեան պատճառով, որի մասին պէտք է, որ մի քանի խօսք ասենք։ Ամէն տարի քաղաքալին մի պաշտօնեալ նշանակում էր այս տարօրինակ ծիսակատարութեան օրն, իսկոյն ամուսնանալու աղջիկների ծնողները յայտարարում էին այդ և գնում խնդրում մի ֆու (բուդդա) կամ տաօսսէ քահանայի բարեհաճութիւնը։ Սուրբ մարդը սովորաբար յարգում էր սըրանց խնդիրը, որի փոխարէն թանգագին ընծաներ էր ստանում։ Աղքատ ծնողների խնդիրը, բնականաբար, ամենից վերջն էր կատարում և սրանց աղջիկները հարուստների աղջիկներից մի քանի տարի տւելի էին սպասում, մինչև որ մի քանի բարեպաշտ մարդիկ յանձն էին առնում վճարել ծիսակատարութեան ծախսը։ Երբ որոշուած օրը հասնում էր, երեկոյին մեծ հանդիսով տանում էին քահանային տօնախմբութեան տունը և միւս օրը, առաւօտեան պատգուրա-

կով, ամսկովանիով, դաւուլ-գուռնով վերադարձնում։ Այժմ նորից ընծաներ էին տալիս քահանային, աղջիկները նրանից գնելու համար, որովհետև սրանք արդէն իրենց կուսապղծելու բարեհաճած քրմի սեպհականութիւնն էին համարւում և չէին կարող պսակուիլ, մինչև որ չգնուէին։

Տիբետիան Հիմալայում և բուն Տիբետում աղջիկները կարող են ամուսնութիւնից առաջ առանց իրենց պատիւը նսեմացնելու, կուսութիւնը կորցնել։ Բազմակնութիւնը բոլորվին արգելուած չէ, բայց աւելի բազմայրութիւնն է տիրում։ Զարմանալի է, որ բուդդայականութեան կեդրոն, այս կրօնամոլ երկրի մէջ, ուր կրօնը կեանքի ամէն գործողութիւններին խառնւում է, ամուսնութիւնը լոկ քաղաքական մի գործ է մնացել, որին քահանաները բոլորովին չեն խառնւում։ Սա լոկ մի քանի վկաների առաջ տուած մի փոխագարձ խոստումն է, որը և կազմում է ամբողջ ծիսակատարութիւնը։ Ապահարզանն էլ կամաւոր է և կախուած է ամուսինների համաձայնութիւնից։

Լամաների, բարձր դասի պաշտօնեաների և մինչ իսկ շատ տիբետցիների աչքում ամուսնութիւնն ատելի, ամօթաւի մի բան է։ Համարեա այս էր, ինչպէս յայտի է և Ս. Պօղոսի կարծիքը այս մասին։ Տիբետում գըեթէ միայն հասարակ ժողովուրդն է արժանի համարում նալաստել ցեղի բազմանալուն և ընկերակցութիւններ հիմնում բեռը թեթևացնելու։ Սովորաբար ընկերակիցներն եղբայրներ են լինում, որոնցից մեծը բոլորի համար ընտրում է մի կին։ Այս բազմայր ամուսնութիւնից եղած որդիները հայր են անուանում երբեմն ամուսիններից ամենամեծին և երբեմն բոլոր ամուսիններին։ Երբեմն եղբայրական բազմայրութիւնը մրցում է բազմակնութեան հետ։ Այսպէս՝ պառաւ կնոջ հետ ամուսնացող երիտասարդը տիրում է և սրա մատաղ քրոջը։

Ընկերակցող ամուսինները սովորաբար գնում բնակում են իրենց ընդհանուր կնոջ տունը, որովհետև այստեղ կինն է տիրում և նրանից է անցնում ստացուածքը որդիներին, որ նոյնպէս նրա սեպհականութիւնն են։ Զնայելով որ Տիբետա-

ցի կինը բազմալիք է, այնուամենայնիւ, նբանց տեսակէտով, բաւական բարոյական է. նա սաստիկ աշխատասէր է, մանում, մշակում, առևտուր է անում և աշխատում է կատարեալ տիտղոսին արժանանալ՝ գուր գալով իւր բոլոր ամուսիններին։ Բոլոր ճանապարհորդների ասելով՝ այս համայնական կեանքը շատ խաղաղ է անցնում և նախանձը երբէք չի խռովում նրանց հանգստութիւնը։ Այս բազմալիքները մինչև անգամ չէին հասկանում Վ. Ժաքմոնին, երբ սա նրանց հարցնում էր թէ կնոջ նրանցից մինին տուած առաւելութիւնը խռովութեան տեղիք չէր տալիս։ Աւելացնենք, որ շնութիւնը, որ ըստ ոմանց շատ հազիւ, իսկ ըստ այլոց շատ յաճախ էր պատահում, շատ թեթևութեամբ եր պատժւում։

ԺԱ.

ԱՄՈՒԽՆՈՒԹԻՒՆԸ ՄՈԽՈՂՆԵՐԻ ԵՒ ՀԻԽՈԽԸՅԻՆ ԱՍԻԱՅԻ ՄՈԽ-
ՂՈՂՆՄԸՆ ՑԵՂԵՐԻ ՄԷՃ.

Տիբետցիներն ու Հիմալայի Բոտերն արդէն քաղաքակըրթուած մարդիկ են և նրանց բազմայրութիւնը, որքան էլ հակառակ լինի մեր օրինաւոր ամուսնութեան վրայ ունեցած զաղափարին, այնուամենայնիւ սերական յարաբերութիւնների կանոնաւորուած և զարգացած մի ձև է։ Աւելի բարբարոսական սովորութիւններ կան Հիւխսալին Ասխայի աւելի վայրենի Մոնղոլանմանների մէջ։ Այսպէս՝ Կամչադալցիների մէջ փեսայացուն պարտաւոր է նախ և առաջ յանձն առնել յաճախ բաւական երկար ժամանակ ծառայելու ապագայ աներանց։ Յետոյ, երբ նրանց հաճելի է գառնում, պէտք է ամօթխածութեան ստհմանը շատ թէ քիչ անցնող մի յարձակում գործէ իւր ապագայ կնոջ վրայ։ Եւ սա հասարակական մի տեսակ ծիսակատարութիւն է։ Միւս կանայք պաշտապանում են քոթանակներով (camisole), վարտիկներով և կապերով ամրապնդուած հարսնացուին։ Փեսայացուն յարձակում է նրա վրայ, երբ լսում է նրա հօրից. «Մօտեցի՛ր, թէ

կարող ես»։ բայց աղջկան սաստիկ պաշտպանում են և շատ յարձակումներ անհրաժեշտ են։ Մարդու յաղթութիւնը հըռչակում է միայն այն ժամանակ, երբ սա յագեցնում է իւր կերքը, որ և կինն ընդունում է՝ արձակելով մի ցաւալի ձայն՝ «նի նի»։ Այս փորձը սաստիկ գործադրում է, սակայն ծնողները կարող են և՛ բոլորովին թոյլ չտալ և այդ կէպքում փեսայացուն կորցնում է իւր կատարած ծառայութիւնը։

Կամչադալների և Տոնգուզների ամուսնութիւնն իսկապէս առևանգմամբ ամուսնութիւնն մի եղակի ձեռ է։ Սըրանք կամ միակին և կամ բազմակին են։ Ամուսնութիւնը հեշտ լուծելի է, և կարող է կատարուիլ ազգագցութեան բոլոր աստիճաններում, բացի հօր և աղջկայ, որդու և մօր մէջ։

Ասիալի համարեա բոլոր մոնղոլական ժողովրդների մէջ կարելի է գտնել քիչ թէ շատ մեղմացած կերպով այս, միանգամայն այնքան անասնական և այնքան դիւրաբեկ սերական միութիւնը։

Եւ յիրաւի, այս ցեղերը, որ բոլորն էլ վարել և գեռ վարում են թափառական կեանք և որ երբեմն այնպէս պատերազմասէր էին, անչափ միտուած են դէպի առևանգմամբ ամուսնութիւնը։ Տոնգուզներն ու Թուրքմէնները գեռ այժմս էլ այն գործադրում են։ Առաջիններն իրենց հարեանների կիներն են փախցնում, երկրորդներն իրենց ժողովրդների աղջիկներն յափշտակում, գեռ չխօսենք պատերազմի գերուհիների մասին։ Բոլոր, բացի պատերազմական առևանգման, դէպքերում, մի տեսակ հատուցումն է տեղի ունենում, որ գլխաւորապէս լինում է ուղտերով, ձիերով և այլն։ Սակայն հին սովորութիւնները վերջանում են և ամուսնութեան ձեզ գնմամբ ամուսնութիւնն է, առանց հարցնելու ամուսինների համաձայնութիւնը, մանաւանդ երբ սրանք գեռ փոքր են, որովհետեւ նրանք պատկանում են ծնողներին, որ նրանց ամուսնացնում է շատ վաղ և երկար սակարկութիւնից յետ, որով որոշում են թէ որքան ձի, ոչխար, շորեղէն, իւղ, ալիւր, օղի պիտի վճարէ փեսայուն։ Մարկո

Պոլովի ժամանակ Մոնղոլները մինչեւ անգամ ձեւականութեամբ պսակում էին իրենց փոքրահասակ մեռած որդիներին։ Եւ ապա վառում էին պայմանը, որպէսզի ուղարկեն այն միւս աշխարհը, ննջեցեալ ամուսիններին և հէնց այդ օրից այդ գերդաստանները միմեանց խնամի էին համարւում։

Ամուսնութեան համաձայնութիւնը կայացնելուց յետ՝ կատարում են կեղծ առևանգմամբ ամուսնութիւն։ Թիւրքմէնների մէջ աղջիկը հարսի հագուստով մի կատաղի ձի նըստած փախյում է, տանելով իւր թամբի գունտի վրայ նոր սպանուած մի ուղ կամ գառն։ Նշանածն և մաղրուորները, նոյնպէս ձիւտոր, ընկնում են նրա ետևից։ Բուն Մոնղոլների մէջ պէտք է միայն ուժով բանալ հարսի տան դուռը և հարսին, հակառակ սրա ծնողների, բարեկամների և մանաւանդ կանանց կեղծ ընդդիմութեան, վերցնել և դնել մի ձիու վրալ։

Մոնղոլները միայն մի օրինաւոր կին ունին և սա է կառավարում տունը և միայն սրա որդիներն են ժառանգում։ Բայց ամուսինը կարող է սրտի ուզածի չափ «փոքրիկ ամուսիններ» գնել, որոնք սակայն ենթարկւում են առաջինին։ Բայց այլակերպուած բազմակնութիւնը միայն հարուստներին է մատչելի, որովհետեւ Մոնղոլիայում կանալք կարծես աւելի սակաւաթիւ են քան տղամարդիկ և հէնց դա է շամանների կուսակրօնութեան գլխաւոր պատճառը։

Սակայն ասում են, թէ Մոնղոլ կանալք լրացնում են թուի պակասը՝ ամուսնութիւնից առաջ և նրա ընթացքում սաստիկ ազատ կեանք վարելով։ Բայց և այնպէս՝ շնութիւնն օրինաւոր կերպով պատժւում է. մեղաւոր մարդը տուգանք է վճարում անասուններ, որ իշխանին է հասնում, որովհետեւ յանցանքը հասարակական է համարւում, իսկ կինը սաստիկ պատժւում է ամուսնուց, որ կարող է մինչեւ անգամ սպանել նրան։ Սակայն այն խստութիւնը պէտք է որ շատ քիչ անգամ գործադրուելիս լինի, որովհետեւ ըստ Պրժեվալսկու կանալք մինչեւ անգամ նեղութիւն էլ չեն կրում իրենց պորինի սէրը թագցնելու։

Մոնղոլիայում ամուսնական կապը շատ դիւրաբեկ է: Ապահարզանը գործադրելի է և ամուսնութեան պէս բոլորովին անձնական մի գործ, որին չի միջամտում ոչ մի քաղաքական կամ կրօնական իշխանութիւն: Կինն արձակելու համար ամուսինը բոլորովին պէտք չունի պատճառներ յառաջադրելու. նա որիան կորցնում է գլխագինը. սա լոկ առեւտրական մի պայման է, որ քակտում է: Իսկ եթէ կինն է ինքն իրեն վերադառնում ծնողաց մօտ, այն ժամանակ սրանք պարտաւոր են մինչև երեք անգամ լետ ուղարկելու նրան ամուսնու մօտ, իսկ չորրորդ անգամին ստիպուած են ընդունելու բաժանումը և պարտաւոր են վերադարձնելու փեսային նրա տուած կենդանիներից մի քանիք:

Ինչպէս որ Մոնղոլների ամուսնութիւնը կամչադալներինի մի նսեմ պատկերն է, այնպէս էլ չինացիների ամուսնութիւնը մոնղոլականի մի մեղմացած ձեն է:

ԺԲ.

ԵՄՈՒՄՆՈՒԹԻՒՆԸ ՉԻՆԱՑԱՆՈՒՄ ԵՒ ՃԱՊՈՆՈՒՄ.

Մեր լիշած ցեղերից շատերի զարգացումը շատ քիչ կամ բոլորովին յայտնի չլինելով, չկարողացանք ցոյց տալ միենոյն խմբի մէջ ամուսնական ծիսակատարութեան կրած փոփոխութիւնները, որ պիտի աշխատենք անելու Ասիաի և Եւրոպայի քաղաքակրթուած ազգերի մէջ: Աւանդութեան ասելով Չինացիներն սկզբում խառնակեցիք են եղել և ամուսնութեան կարգաւորումը վերագրում է նրանց առաջին իշխող ֆօ-չինին: Թէ արդարեւ նախնի Չինացիք ունեցել են առեւազմամբ ամուսնութիւն կարելի է ենթագրել դրա մնացորդ, սրանց հետ միասին շատ ազգերի մէջ տարածուած այն սովորութիւնից, որ հարսն առաջին օնդամ փեսի տուն մըտնելիս՝ շէմքի վրայ գրկում ներս են փախցնում: Նրանք նաև բազմակի կամ բազմաստանով ծախել տալու: Իսկ եթէ ամուսինը յանցանքին վրայ հասնի, իրաւունք ունի երկուսին էլ սպանելու: Այս գաղանաբարոյ իրաւունքը համարեա ամբողջ աշխարհի վրայ գոյութիւն ունի և այս բանում եւրոպացիներն, որ այնքան խստութեամբ արհամարհում են Չինացիներին, նրանցից պակաս չեն: Չինացի կինն, ընդհակառակը, պարտաւոր է պաշտեռ իւր տիրոջը և նրա մահուան ժամանակ անձնասպանու-

կնոջն ենթարկուող «փոքրիկ կանալք» գնելու սովորութեան հետ: Այս կէս օրինաւոր, կէս անօրէն գերգաստանների մէջ տիկնանց տիկինը բոլոր որդիների մայր է համարւում և սըրանք նրան մայր են կոչում կենդանութեան ժամանակ միայն նրա, և ոչ թէ իրենց իսկական մօր, մահից յետ սուգ պահում: Չինաստանումն էլ ամէն տեղի սկզբ բազմակինութիւնը միայն մեծամեծների առանձնաշնորհումն է: Միջին դասակարգում հասարակական կարծիքը դատապարտում է «փոքրիկ կանալք» գնելը, բացի այն գեպքից երբ օրինաւոր կինը 10 12 տարի շարունակ ամուլ է, որովհետեւ չինացու համար ամուլութիւնը նախատինք է, սա մինչև անգամ բաժանուելու մի պատճառ է: Ամուսնական այս սովորութներն ցոյց են տալիս, որ Երկնքի պետութեան մէջ կինը շատ ստոր տեղ է բռնում: Իւր ստորագրութիւնը չափից դուրս է. աղջիկ ժամանակ ստորագրուում է ծնողներին, կին ժամանակ՝ ամուսնուն, այրի ժամանակ որդիներին: Չինացի աղջիկը մինչև անգամ գաղափար չունի որ կարելի է նրան խորհուրդ հարցնել ամուսին ընտրելիս: Չինացիներն ոչ միայն փոքրահասակ նշանագրում են, այլ և երեխաները դեռ չծնած, հայրերը ուխտ են դնում միմեանց տալ, եթէ տարբեր սեռի լինին: Այստեղ էլ Մոնղոլիայի պէս աղջկան գնում են և գլխազնի մի մասը հէնց նշանագրութեան ժամանակ վճարում: Նշանածներից մինի մահուան գեպքում, հասարակական կարծիքը պատուիրում է հարսնացուին, միայն հարսնացուին, կոյս դառնալու: Հենց որ ամուսնանում են՝ կինն սկսում է փակուած կեանք վարել իրենց բնակարանի խորքում: Եւ եթէ շնանայ, ամուսինն իրաւունք ունի նրան ծախելու կամ դատաստանով ծախել տալու: Իսկ եթէ ամուսինը յանցանքին վրայ հասնի, իրաւունք ունի երկուսին էլ սպանելու: Այս գաղանաբարոյ իրաւունքը համարեա ամբողջ աշխարհի վրայ գոյութիւն ունի և այս բանում եւրոպացիներն, որ այնքան խստութեամբ արհամարհում են Չինացիներին, նրանցից պակաս չեն: Չինացի կինն, ընդհակառակը, պարտաւոր է պաշտեռ իւր տիրոջը և նրա մահուան ժամանակ անձնասպանու-

թիւնը մի շատ գովելի գործ է համարւում, որ արձանագրւում է պատուի թերթիկների վրայ և որ երբեմն մեծ շքով կատարւում է հազարաւոր հանդիսականների առջև:

Չինաստանում թոյլ է տրւում փոխադարձ համաձայնութեամբ բաժանուել, բայց բացի դրանից ամուսինն իրաւունք ունի թողնելու կնոջը ամուլութեան, անբարոյականութեան, դէպի կերսանքն ունեցած արհամարհանքի, ամուսնու հետ լաւ չվարուելու, դէպի չարախօսութիւնն ու գոլութիւնն ունեցած հակման, ինչպէս նաև նախանձու լինելու կամ դիւական մի հիւանդութիւն ունենալու պատճառով։ Մենք թուած կը լինինք չինական ամուսնութեան գլխաւոր կէտերը՝ ասելով և այն, որ նա օտարացեղ է։ Ամբողջ Չինաստանում հազիւ թէ հարիւր գերդաստանի անուն լինի և միւնոյն անունն կրող մարդկանց մէջ ամուսնութիւնն արգիւուած է։ Այս սովորութեան մէջ կարելի է նախնի առևանգմամբ ամուսնութեան մի աւանդական մնացորդ նշանարել, որովհետեւ, մեզ թւում է, թէ այս անգամ Կամչադալից մինչև Չինաստան, անցնելով Մոնղոլիայով, պիտի ունենանք ամուսնական մի ձեւի զարգացումը, իւր սկզբնական կոպիտ ձեւից մինչև իւր օրինաւոր և ամէն կերպ կարգաւորուած կազմակերպութիւնը։ Եւ յիրաւի, տեսնում ենք, որ այս ընդարձակ երկրում առևանգմամբ ամուսնութիւնն աստիճանաբար հակւում է դէպի միակնութիւնը, որ կեղծ Մոնղոլիայում և Չինաստանում, իրական է դառնում Լու-Չու կղզիներում, ուր գարշելով են խօսում չինական բազմակնութեան մասին, միանգամայն պահելով իրենց կանանց խիստ հպատակութեան մէջ։

Հին-ծապոնը, որ Չինաստանից է ստացել իւր ամբողջ քաղաքակրթութիւնը, մինչև իւր աւատական շըջանը պահպանել է չինական ամուսնութիւնը, որ կատարւում էր միայն ծնողների կամքով և լուծում միւնոյն պատճառներով։ Սակայն փոքր առ փոքր կանանց հպատակութիւնը թեթեացել է և այսօր ճապոնացի աղջիկը ձայն ունի, երբ հարցն ամուսնու ընտրութեան է վերաբերում։ Կնոջ անհաւատարմու-

թիւնն իրաւունք է տալիս ճապոնացի ամուսնուն՝ սպանելու նրան իւր մեղսակցի հետ միասին, բայց ոչ մինին առանց միւսին։ Հասկանալի է, որ ծապոնում, ինչպէս և ամէն տեղ, ամուսնու և կնոջ համար երկու կշեռ և երկու չափ կայ։ Այսպէս՝ բաժանուելիս ճապոնացի կինը վերպառնում է իւր գերդաստանն առանց իւր երեխաների։

Միւս կողմից, միակնութիւնը ճապոնումն էլ Չինաստանից աւելի լաւ արձատ չէ բռնել շնորհիւ բարքերի այն պատութեան, որ պարզեած է հասարակ դասակարգի աղջիկներին ամուսնութիւնից առաջ։ Յայտնի է, որ ծապոնում աղքատ ծնողները մի քանի տարի վարձով են տալիս իրենց աղջիկները մեծ քաղաքների հասարակաց տներում։ Ճապոնացի այս անառակ աղջիկներից միքանիսն, որոնց սովորեցնում են հաճուանալու արուեստ և այլն, մեծ պատիւ են ստանում և երկում են կրօնական թափորներում ու մահից յետով արձաններ են ունենում տաճարներում։ Ընդհանուր առմամբ կարելի է սրանց համեմատել Յունաց հէտափիրների հետ։ Որովհետեւ ծապոնում հասարակական կարծիքը չի դատապարտում խառնակեցութիւնը, ուստի և խառնակեցիկ կանաչ կարող են ամուսնանալ՝ երբ կապալի ժամանակամիջոցը լրանում է։ Վերջապէս ճապոնում ամուսինն իրաւունք ունի անսահման թուով հարճեր ընդունելու իւր տանը—ահա բազմակնութեան մի զուքս, որ մօտաւորապէս միմիայն բարձըր գասակարգին է վերապահուած, որովհետեւ շատ ծախսեր է պահանջում։

Համառօտելով ասածներս, կը տեսնենք որ մոնղոլական մեծ ցեղն, իւր ամբողջութեամբ առած, երևան է հանում զանգզան տեղերում և զանգզան ժամանակների մէջ ամուսնութեան մի կատարեալ զարգացումն (l'évolution) սկսելով դազանաբարոյ առևանգմամբ, որ դեռ մինչև այսօր գործադրում են Կամչադալները, Տոնգուզներն ու Սամօլիզները, մինչև Չինացիների ու ճապոնացիների սաստիկ չափաւորուած միակնութիւնը, անցնելով թափառականների բազմակնութիւնից։ Միւնոյն ժամանակ մոնղոլացի կնոջ վրճակն աստի-

ճանաբար լաւանում է։ Սկզբում փախցնում էին նրան, որպէս մի որս, յետոյ միայն գնում։ Սկզբում բացարձակապէս ենթարկուելով ծնողների իշխանութեան և համարուելով գերդաստանի սեպհականութիւն, նա փոքր առ փոքր ձեռք է բերում աւելի՝ ու աւելի ազատութիւն և հետզհետ իբրև անձնաւորութիւն նկատում։

Վերջապէս ճապոնացիների հասարակական տօների կազմակերպութիւնը թոյլ է տալիս մեզ ենթադրելու, թէ շատ հին ժամանակ, ամուսնական կարգից առաջ, հետերիզմի մի շրջան է տեղի ունեցել։ Տարակոյս չկայ, որ այս զարգացումը (էվոլյուսիօն) սոցիալական տեսակետից շատ նշանաւոր է, որովհետև մոնղոլական ցեղն ինքը միայն ամբողջ մարդկային ցեղի առնուազն երրորդ մասն է կազմում։ Բայց և այնպէս՝ մենք կը զգուշանանք դրանից ամբողջ մարդկութեան համար օրէնքներ գծելու, որովհետև մարդկութիւնը սաստիկ տարբեր գոյներ է կրում և անցեալ դարերի ընթացքում բնիկ ժողովուրդները շատ կերպ փոփոխուել են, գոյութեան կոռուին յարմարուելու։ Նաև փոքելով ձեւակերպել ընկերաբանական (sociologique) ձիշտ, մէկին օրէնքներ, ինչպէս Փիզիքայի և տարրաբանութեան օրէնքներն են, գուցեւ այլ ինչ անենք, բայց եթէ ընկնինք գեղեցիկ անուրջների մէջ։

ԺՊ.

ԱՐԱԽՆՈՒԹԻՒՆԸ ԷՄԻԱՅԻ ՍՊԻԾԱԿ ՑԵՂԵՐԻ ՄԻՋ.

Պիկտէ և ուրիշ շատ նշանաւոր հնդկագէտներ աշխատել են նախնի Արխաների ամուսնութեան մասին ձիշտ տեղեկութիւններ հանել Վեդայից, բայց մենք չենք հետեւիլ դրանց, որովհետև դրանք շատ քիչ են արժանի դրական համարուելու։

Փոքր ինչ աւելի ձիշտ տեղեկութիւններ մեզ տալիս է Մահաբարատա քերթուածը, որ խօսում է խառնակեցութեան մասին՝ որպէս մի շատ հին և բոլորովին անոլախարակելի սո-

վորութիւն։ Միւս կողմից, այս սկզբնական դրութեան մի մեղմացած մնացորդ կարծես երկար ժամանակ գոյութիւն է ունեցել Հնդկաստանում, որովհետև Գոյայում, Պոնտիշերիում և Գանդէսի միքանի հովհաններում աղջկները պարտաւոր էին նախ և առաջ ժագժերնոտ տաճարում մինին նուիրուելու, և այսպիսի սովորութիւնների հետքեր մինչև հիմայի մնացել են։ Մալաբարում թագաւորի ամուսնութեան ժամանակ, թագուհին առաջին երեք գիշերը պատկանում էր մեծ քրմին, որ մինչև անգամ լիսուն ուկեդրամ էր ստանում իւր մատուցած ծառայութեան համար։ այս տարօրինակ սովորութիւնն ոչ այլ ինչ է, եթէ ոչ կամրջիան Զին-Թանը, որի մասին արդէն խօսեցինք։ Նաև ամուսիններից կը շացած բոլոր կանայք, այլինութիւնից ձանձրացած բոլոր ալրիները իրաւունք էին ստանում սրտերի ուղածներին նուիրուելու։ Տիւլաւալի մի տաճարին մի զոհ մատուցանելով։ Դեռ այսօր էլ պոռնիկների խմբերը կապուած են հնդկաց զանազան մեծ տաճարներին, որոնց օգտին նրանք գործ են գնում իրենց արհեստը, բոլորովին չդատապարտուելով հասարակաց կարծիքից։ Նոյն իսկ մինչև վերջին ժամանակներս Հնդկաստանում միայն կանայքն էին դաստիարակութիւն ստանում։ Բուդդայի ժամանակ պոռնիկների մեծ տիրուհին Վիսալի քաղաքում սաստիկ յարգուած էր, և Սակիամունին, այս աստուածալին մարդեղութիւնն, ամօթ չը համարեց նրա մօտ կենալու։ Եթէ այս բոլոր փաստերը բաւական չեն խառնակեցութեան մի հին շրջանի գոյութիւնն ապացուցանելու, գոնէ ցոյց են տալիս վարքերի չափից դուրս ազատութիւնը։

Արդէն Մանուկի օրէնսգիրքը մի, ըստ երեսութիւնն միակին, ամուսնութիւն է պատուիրում։ Այս ամուսնութիւնն անլուծանելի է և ամուսինները պարտաւոր են փոխադարձաբար միմեանց հաւատարիմ լինել։ Ալրիութեան ժամանակ տղամարդը կարող է նորից ամուսնանալ, բայց այս բանը կնոջ համար ստատիկ պարսաւելի է։ Բոլոր դաստիարակերի տղամարդիկ կարող են իրենցից ստոր դաստիարակերից կին առնել, բայց նրանց խստիւ արգելուած է իրենցից բարձր դաստիարակի պատկանող կնոջ հետ ամուսնանալ։

Ննութեան դէմ օրէնսգիրքը սարսափելի պատիժներ է սահմանել: Թագաւորը պէտք է մի հասարակական բազմամբով տեղում շներին լափել տայ անհաւատարիմ բրահմուհուն, իսկ նրա մեղսակիցը, եթէ միայն բրահմա չէ, պէտք է պարկի կրակով կարմրացրած երկաթէ մահմակալի վրայ: Իսկ բրահմայի մոլութիւնը շատ թեթևութեամբ է պատժը: Աստուած պաշտպանում է իրենները:

Հնդկաց ամուսնութիւնն օտարացեղ է: Զի կարելի մինոյն անունը կրող և ոչ էլ մինչեւ վեցերորդ աստիճանի տղական կնոջ հետ ամուսնանալ:

Խնչպէս յաճախ պատահում է, այս օտարացեղ ամուսնութիւնը գոյութիւն ունի կնոջ վերին տատիճանի հապատկութեան հետ: Ամուսինը պարտաւոր է հոգս տանիլ իւր կնոջ վրայ ինչպէս մի երեխայի: նա պարտաւոր է նրան պահել տալ օրէնքները: Երբեմնապէս կարող է թուլ տալ նըրան անմեղ հաճովքներ, սակայն սրա փոխարէն կինը պարտաւոր է նրան բացարձակ հնազանդութիւն: Ամուսնական վիճակից դուրս կինն ապրում է իւր արական ազգականների իշխանութեան տակ: Կարելի է թողնել կինը, եթէ կռուաբար կամ հարբեցող է, եթէ ուժ տարի շարունակ ամուլ է մնացել և կամ չէ տուել ամուսնուն արու զաւակներ, գեռաւելի, ամուսինն իրաւունք ունի մէկ և նոյն իսկ երկու անգամ խնդրել մի եղբօր և կամ մի ազգականի բեղմնաւորելու իւր ամուլ կինը: Այլիների հետ ևս կարելի է միենոյն կերպ վարուիլ, որովհետեւ պէտք է «նախնիքների պարտքը վճարել»:

Օրէնսգիրքն ոչինչ չի լիշում կանանց իրենց ամուսինների խարոյկի վրայ կամաւ այրուելու (սուտի) մասին, որ համեմատաբար վերջին ժամանակի բան է, բայց նա նկատում է կնոջն որպէս մի վտանգաւոր, չարագործ էակ: «Կանացի սեռը, ասում է նա, բնութեամբ տրամադիր է ջանալ մարդկանց գլխէ հանելու: Պէտք չէ քրոջ, մօր կամ դստեր հետ մնալ առանձնացած տեղերում»:

Դեռ մինչեւ այսօր Հնդկաստանում ամուսնական միու-

թեան մէջ ազատ ընտրութիւնը բոլորովին մաս չունի. աղջիկ ու տղի գերդաստաններն են ամուսնացնում սրանց իրենց քմքի համեմատ: Վերջապէս բազմակնութիւնը ներւում է բարձր դասակարգի մարդկանց:

Այրի կինը կարելոյն չափ շուտ է ամուսնանում, որովհետեւ Հնդկաստանում չամուսնացած մարդը հասարակութիւնից համարեած մերժում է: Որովհետեւ ամուսնութիւնն առանց աղջկայ կամքը հարցնելու է կատարում ծնողների ձեռքով, որոնք գլխաւորապէս կարողութեանն են նայում, ուստի յաճախ պատահում է, որ վախսունամեալ բրահմաներ ամուսնանում, կամ աւելի ճիշտ՝ գնում են իբրև կին հնդից եօթ տարեկան աղջկներ: Մէկ խօսքով՝ Հնդկացի կինը մի համեստ ստրուկ է, որ մինչեւ անգամ իրաւունք չունի իւր ամուսնու հետ հաց ուտելու:

Հիւսիսացին Հնդկաստանում ամուսնութիւնն աւելի գազանաբարով, աւելի սկզբնական ձեւը ունի: Ալմօրա վիճակի Քաջիասները, խորին բրահմականներ, գեռ գործադրում են վալրենի, օտարացեղ ամուսնութիւնը, աղջիկ փախցնելը: Այսպէս՝ փախցրած կինը մի տեսակ սեպհականութիւն է համարում, որի հետ վարում են ինչպէս ուզում են և ծանրաբեռնում անթիւ ծառայութիւններով:

Հիմալայեան միքանի վիճակներում ջեմնայի աղբիւրների մօտ, նեպոլում և ուրիշ տեղեր Հնդկական Արիացիները Տիբէտի պէս բազմաց են: Նրանց համար կինն իսկապէս մի ապրանք է, որ առնում և ծախում են: Ֆրազէրի ժամանակ կինը գիւղացիների մօտ արժէր 10—12 ըուպի¹⁾, մի գումար, որ քաղցր էր ստանալ և գառն՝ վճարել: Նաև ամենայն սիրով ծախում էին աղջիկները, և իւրաքանչիւր գերդաստան եղբացները իրենց բոլորի համար մի կին էին առնում, որ առանց գժուարանալու վարձով էին տալիս օտարականներին: Այդտեղ, ինչպէս և բազմալրութիւնը տիրող բոլոր տեղերում, այդ բանը կանանց մէջ բոլորովին գալթակութիւն չէ յարուցանում և այդ սովորութիւնը միշտ չէ

¹⁾ Մի ըուպին աղմէ մօտարացապէս՝ 2 ֆլ, 40 ս. կամ 90 կոպէկ:

վնասում ընդհանուրի բարոյականութեան: Այսպէս՝ Զէմնահաղիւրների բազմացրների մէջ ստախօսութիւնը, մինչև անգամ անմեղ ստախօսութիւնը, գարշելի է: Իսկ նեսովի բազմացրներն այդ կողմի ամենալաւ մշակողներն են: Ոչ մի վէճչի ծագում այս բազմալր միութեանց պտուղների վերաբերմամբ: Անդրանիկը պատկանում է աւագ եղբօքը, երկրորդը՝ երկրորդին և այլն:

Աֆղանստանում կնոջ վիճակը դարձեալ շատ ստոր է: Աֆղանները, որ մահմետական և հետեւաբար՝ բազմակին են, գնում են իրենց կիները և իրաւունք ունին երբ կամենան արձակեն և վարձով տան իրենց հիւրերին:

Նրանց համար լեզիրան մի պարտականութիւն է: Այսի կինը մնում է դարձեալ որպէս մի ստացուածք, ինչպէս որ էր ամուսնու կենդանութեան ժամանակ, և երկրորդ ամուսնութեան դէպքում նոր ամուսնի ծնողները վճարում են կնոջ գինն առաջին ամուսնու ծնողներին:

Ս.սիալի սպիտակ ցեղի միւս ազգերի, Պարսիկների և Սեմիտների մէջ սերական միութիւնները շատ հետու էին և են իդէալական միակնութիւնից: Վերջին դարում Պարսիկները գեռ կապում էին ժամանակաւոր ամուսնութեան պարմաններ: Մի որոշ ժամանակի համար ամուսնական պայման էին գրում և այս ժամանակամիջոցը լրանալիս երկուոն էլ աղատ էին: Եւ եթէ այս միջոցին կինը լիդ լինէր, անցողական ամուսինը պարտաւոր էր նրա մի տարուայ տպրուստը հայթհայթել: Այս կարճատե միութիւնից եղած երեխան պատկանում էր հօրը կամ մօրը, նայելով թէ ինչ սեռի էր: Շարդէնի ժամանակ այդ երկրում ամուսնական միութիւնների մէջ մեծ ազատութիւն էր տիրում: Ամուսնութիւնը, որ բազմակնութիւն էր, ինչպէս մահմետական բոլոր երկրների մէջ, առանց ծնողների համութեան էր կապում և բոլոր երեխաներն օրինաւոր էին համարւում առանց նայելու, թէ նրանց մալրն ամուսին, հարճ թէ գերի էր:

Փռքը Ս.սիալի բնակիչների մէջ, ուր սեմիտական, իրանական և կովկասեան ցեղերը քիչ թէ շատ խառնուել են

միմեանց, կարելի է լիշել շատ հետաքրքիր և նշանաւոր սովորովներ, մանաւանդ անցեալից: Թւում է թէ խառնակեցութիւնն երբեմն քիչ թէ շատ գործադրուել է այս կողմերում: Ստրաբոնը պատմում է Պարթևների մասին, թէ սրանց մէջ կինը պարտաւոր էր փոխել ամուսնուն, երբ նըրանից 2—3 որդի ունենար: Բաբելոնում պատգամի հրամանով մի օրէնք պատուիրում էր բոլոր կանանց իրենց կեանքի ընթացքում գոնէ մի անգամ գնալ Մելիտտա գիցուհու տաճարն և նուիրուել մի օտարականի և սա մի վարձատրութեամբ, որքան էլ որ սա չնշին լինէր: Յետոյ, բայց միայն յետոյ, նա ասլրում էր ողջախոհութեամբ: Նաև Կիսլրոսում ջահիլ աղջիկները պարտաւոր էին որոշ օրեր գնալ ծովի ափը և նուիրուել իրենց կուսութիւնն Աստղիկին: Բալիարեան կղզիներում, որոնց առաջին բնակիչները, ըստ երեսութիւն, փետնիկեցիներն են եղել, նորահարսերն առաջին գիշերը պատկանում էին ներկայ եղող բոլոր հիւրերին:

Հայաւտանում քրմուհիներն որպէս մի առանձին առանձնաշնորհումն, իրաւունք ունէին բազմալր լինելու և Մարաստանի մի քանի նահանգներում կնոջ համար շատ պատուաբեր էր գոնէ հինգ ամուսին ունենալը (Ստրաբոն XI.):

Բուն Սեմիտների մէջ, որ այնպէս նուիրուած են հաճուքին և չափազանց հեշտասիրութեան, ինչպէս ցոյց է տալիս նրանց կրօններն ու պատմութիւնն, բազմակնութիւնը բոլորովին սկզբնական մի աւանդ է: Առաքինի Սողոմոնն եօթը հարիւր կին ունէր, երեք հարիւր հարճ¹⁾ և Հրէաները կարելոյն չափ հետեւում էին այս փառաւոր օրինակին: Արաքները նոյն են անում, ինչ որ իրենց հօրեղբօղորդի իսրայէլացիներն գեռ մահմեդականութիւնից առաջ: Բայց թէ առաջիններն և թէ երկրորդները Բաբելացիների հակառակ մեծ գին էին տալիս և տալիս են իրենց կանանց կուսութեան: Հրէաների մէջ եթէ մինը մեղադրէր իւր կնոջը թէ ամուսնանալիս կոյս չէ եղել, սա քարկոծանքի կը դատապարտուէր, եթէ ծնողները վրայ չհասնէին և չապացուցանէին ծերերին թէ այդ մեղադրանքը անարդար է:

¹⁾ Թագաւորաց XI տ. 3.

Դեռ մինչև այսօր Ս.րաբիայում այդ լանցանքն անժիշտապէս բաժանուելու մի առիթ է և Եմենում երբեմն ամուսինը մինչև անգամ սպանում է հարսին։ Բայց և այնպէս՝ սա չի խանգարում, որ Մեկկա քաղաքում ըոլոր հարուստներն իրենց օրինաւոր կանանց կողքին պահէին լնդհանրապէս հապէշ հարճեր։

Ուրիշ Ս.րաբներ, որ հեռացել են հայրենիքից և խառնուել Քերբերներին, բոլորովին չեն հոգում իրենց կանանց հաւատարմութեան մասին։ Մպիտակ Նեղոսի Հասանեան (Hassanieh) Ս.րաբների մէջ փեսան գնում է կնոջ շաբաթուալ մի քանի օրերը, վճարելով մի քանի գլուխ անասուն, իսկ մնացած օրերը կինն ազատ է իւր ուզածի պէս տնօրինելու։

Ահա ասացինք աւելի քան որ պէտք էր հաստատելու, որ Ասիայի և Ա.քրիկայի սպիտակ ցեղերն իրենց ամուսնական սովորութիւնների վերաբերմամբ ոչ միայն ոչ մի բնածին ազնուութիւն չեն կրում իրենց վրայ, այլ և շատ կողմերով մինչև անգամ մօտենում էին և մօտենում են ստորին ցեղերին։ Եւ միայն Եւրոպայումն է, որ ջանք է թափուել ամուսնութեան մէջ արժանաւորութիւն մտցնելու և փոքր ինչ բարձրացնելու կնոջն այն ստրկութիւնից, որին նա ենթակայ է ամբողջ աշխարհումս. սակայն այս գործը, որ դեռ շատ հեռու է աւարտուելուց, մի օրուալ բան չէր։

ԺԴ.

ՅՈՅՆ ՀԹԱՎՄԵԱԿԵՆ ԱՄԱԽՆՈՒԹԻՒՆԻ.

Յունական քաղաքակրթութիւնը, մարդկային մտքի այս թթիւմորը, միւս բոլորի նման սկզբնական վայրենութեան վրայ էր պատուաստուած։ Եւ լիրակի, աւանդութիւնը հաստատում է, որ Սիկոպսից առաջ (Քրիստոսից մօտ 17 դար առաջ.) Յոյները խառնակեցիկ կեանք էին վարում։ Այս շըլջանում երեխաները միայն էին ճանաչում և նրա ա-

նունը կրում։ Սա թէև աւանդութիւն է, բայց հաստատուած է մինչև պատմական ժամանակն հասած շատ հետքերով։

Լիկուրգոս դեռ թոյատրում էր ամուսիններին՝ փոխտալ իրենց կանայքը նրանց, որոնց արժանի կը համարէին այդ պատուին, որպէսզի այդպիսով որդիներ ունենային։ Միւնոյն օրէնսդրի համաձայն, հասակն առած ամուսինը մի գովելի բան արած կը լինէր, եթէ գտնէր իւր կնոջ համար մի աւելի ջահիլ, գեղեցիկ և առաքինի մարդ։ Ս.թենական քաղաքակրթութեան ամենածաղկած ժամանակ Պղատոնը նախատում էր Մինոսին և Լիկուրգոսին, որ կանայքը հասարակաց չեն հրատարակել և իւր «Հասարակապետութիւն» գրքի մէջ նա քարոզում է թէ կինը ձեռքից ձեռք պիտի անցնի. և Սոկրատէս, առաջադոյն գործադրելով իւր աշակերտի պատուէրը՝ փոխ տուեց իւր Քսանտիպապա կինն Ալքեբիտէսին։ Վերջապէս յայտնի է թէ Ս.թէնքում միքանի շուայտուհիներ (courtisane) կ'նչպիսի մեծարանք էին ստանում։

Հելլենական ամուսնութիւնը սկզբում շատ թանձրաբարոյ էր (grossier)։ Ա.զիկներ էին գնում կամ նուէրներ տալով և կամ հօրը ծառայելով։ Ամուսնութիւնը շատ վաղ դարձաւ միակնութիւն, միայն ներում էր հարճ պահէր։ Բոլորովին ամօթալի չէր հարճի որդի լինել, որովհետև Ոդիսես անգամ հարճի որդի էր։ Միայն թէ այս անհարազատ որդիները չէին ժառանգում իրենց հօրը։ Վերջապէս Յունաստանում, ինչպէս և Հռոմում, նախնական ամուսնութիւնը բաւական չէր հաստատելու պայազատութիւնը (filiation), որ հիմնուած էր միայն հօր ազդի վրայ։

Առևանգմամբ ամուսնութեան հետքեր երկար ժամանակ մնում էին Սպարտայում, ուր երիտասարդը պէտք է փախցնէր իւր նշանածը, «որ այլ ևս մի փոքրիկ խոխա չէր, այլ մեծ, ուժեղ և արբունութեան հասած մի աղջիկ»։ Բացի դրանից, մի որոշ միջոց փեսաները միայն գաղտնաբար կալող էին տեսնել իրենց նշանածներին։

Փոքր առ փոքր սկսան փոխանակ ծախելու՝ օժտել աղջիկներին և մինչև անգամ արհամարհել անօժիտներին. սկզբում Յունաստանում և Հռովմում թոյլ էր տրւում աղջկան՝ անձը ծախելով շահել իւր օժիտը: Ծնողների տուած օժիտը սկզբում հաստատում էր գրաւականներով, վկաների ներկայութեամբ ցոյց տրուած երաշխաւորներով, յետոյ հասրակական մի պայմանադրութեամբ. այդ օժիտի դէմ ամուսինն էլ իւր անշարժ կալքերն էր գրաւ դնում:

Զնայելով այդ օժտին, յոյն կինն իր էր համարւում: Հայրը կարող էր նրան ամուսնացնել առանց իրեն հարցնելու: Երբ արական ժառանգ ըլ լինելու պատճառով նա ժառանգում էր, իսկապէս դառնում էր ժառանգութեան մի մաս և պարտաւոր էր ամուսնանալ այն ազգականի հետ, որ առանց նրան ժառանգելու էր, և կամ ազգականներից ամենածերի հետ, եթէ սրանք շատուոր լինէին: Եթէ նա ժառանգելու միջոցին օրինաւոր կերպով ամուսնացած էր, այդ ամուսնութիւնը լուծում էր: Հայրը կարող էր իւր կարողութեան հետ աղջիկն էլ կտակել, և ամուսինն իրաւունք ունէր կտակելու իւր կինը մի ընկերոջ, ինչպէս որ արաւ Դիմութէնի հայրը:

Եթէ ամուսնացած կինն անառակութեան մէջ բոնուէր, ամուսինը կտակ էր սպանել նրան վկաների առաջ քննելուց յետոյ:

Լատինացիների ամուսնական սովորոյթները յունականին շատ նման էին: Սամնիտների մէջ աւագներն ամէն տարի ջահիներին հաւաքում իրենց արժանաւորութեան համեմատ դասակարգում և յետոյ թոյլ էին տալիս հերթով և իրենց գիրքի համեմատ մի աղջիկ ընտրելու: Առևանդմամբ ամուսնութեան հետքերը Հռոմում տեսում էին մինչև կայսրների ժամանակ, այսպէս՝ հարսին շէմքի վրայ վեր էին բարձրացնում և մազերը գեղարդով երկուսի բաժանում:

Երբէք աղջիկն ինքն իրեն չէր ամուսնանում: Կատ անգամ նրան նշանում էին զեռ երեխայ ժամանակ, միայն նա օրինաւոր կին էր դառնում տասերկու տարեկան հասակում:

Հայրը, որ իրաւունք ունէր ամուսնացնելու իւր աղջիկն առանց սրա համաձայնութեան, իրաւունք ունէր նաև լուծելու այն, և այս անչափ իշխանութիւնը միայն Անտոնիոս թուլացրեց: Հռովմի սկզբնական շրջաններում կինն ստրուկի անունով միայն դառնում էր ամուսնու գերդաստան անդամ, ինչպէս և նրա որդիները, որովհետեւ ստրկութիւնից ազատուած որդին այլ ևս չէր ժառանգում: Ազգբներում կնոջը տիրում էին ինչպէս մի իրի, որովհետեւ առաքինի կատուն անգամ փոխ տուեց իւր կին Մարցիան իւր ընկեր Հորտենցիուսին, որի մահից յետոյ նորից յետ վերցրեց: Հռովմէացի ամուսինն իրաւունք ունէր թակելու իւր կինը, որովհետեւ Ա. Օգոստիանոսի մօր Մոնիքի ասելով, Հռովմէական ամուսնութիւնն ոչ այլ ինչ էր, եթէ ոչ «Ճառայութեան դաշինք»:

Միշտ գնում էին կինը և գնմամբ (per coemtionem) ամուսնութիւնը միշտ կար: Եթէ հարսն ազնուական տոհմից էր, վաճառումը քողարկում էր confarréation կոչուած ծիսով, որ կայտնում էր տասն վկաների առջեւ ֆիւպիտերի քրմապետի տուած գաթան վիեսի հետ բաժանելում, որովհետեւ Հռովմում ամուսնութիւնը, «Ճիշտ ամուսնութիւնը», որ երկար ժամանակ պատրիկների առանձնաշնորհումն էր, կրօնական սրբազործումն էր պահանջում: Բայց հենց որ կինը Coemption կամ Confarréation-ով ամուսնանում էր, մարմնով և գոյքով պատկանում էր ամուսնուն, այնուհետեւ «Նրա ձեռքի մէջն էր»:

Օժիտի սովորութիւնը փոքր ինչ բարելաւեց այս վայրենարարոյ ամուսնութիւնը, տալով կնոջն անկախութիւն, որ սակայն շատ անգամ չարն էր գործադրում:

Օժիտով ամուսնութեան ժամանակ աղջիկը մնում էր հօր տունը, ժառանգում էր հօր գոյքը և ինքն էր այն կառավարում: Սովորաբար նա այդ հոգու յանձնում էր մի ստրուկի, «օժտի ստրուկի», կամ մի փոխանորդի, որ դառնում էր նրա մտերիմը: Եւ կայսրութեան ժամանակ համարեա ամբողջ բարձր դասակարգի մէջ միայն այս «ազատ ամուսնութեան» ձևն էր տիրում և լատինացի մատենագիր-

ները չեն դադարում այսպէս ամուսնացած կանանց անբար-
տաւանութիւնն ու վատ վարքը քննադատելուց:

Նախնի գասական ազգերի վրայ ձգած այս համառօտ
ակնարկը ցոյց է տալիս, որ նրանց մէջ էլ ամուսնութիւնը
շատ ուշ է կազմակերպուել, որ նրա սկզբնական ձևերն ա-
մենավայրենական են եղել և փոքր առ փոքր մեղմացել:
Սա ապացուցանում է, որ կինը, սկզբում ստրուկ, ծախուե-
լու, կտակուելու, փոխ տրուելու դատապարտուած մի էակ,
փոքր առ փոքր նուաճել է բաւական մեծ ազատութիւն:
Աւելացնենք և այս, որ շատ վաղ ժամանակից լոյն-հռովմէ-
ական ամուսնութիւնը միակնութիւն է եղել, սակայն հար-
ճապահութիւնը չէ արգելուել, որովհետև հարճերը նոյն
իսկ Հռովմում օրինաւոր դիրք են ունեցել և Կոմմոդը կա-
րողացել է յայտնի կերպով 300 կանանց մի հարեմ պահել:

ԺԵ.

ԵԽԻՌՊԱԿԵՆ ԸՄՈՒՄՆՈՒԹԻՒՆԻ ՀԹՈՄԻՑ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԵՆԻՑ ԴՐԱԲԱ.

Նախնական Յոյների և Հռովմայեցիների սովորութեանց
նման սովորութներ գոյութիւն են ունեցել Եւրոպայի միւս
տրիական ցեղերի մէջ էլ, դրանք ևս շատ թանձրաբարոյ են
եղել և չեն մեղմացել, մինչև որ Հռովմէական քաղաքակր-
թութիւնը չի թափանցել այդ ցեղերի մէջ: Հետևապէս
թոյլ է տրուամ ժպտելով մերժել այն տեսաբանների
(théoricien) ցնորական կարծիքը, որ ալքիմիական լեզուաբա-
նորէն վերլուծելով Վեդայի բնագիրները ցոյց են տուել,
թէ ենթադրական Արիաստանում եղել է ազնիւ, մաքուր,
միակին ամուսնութիւն և այլն, և այլն:

Առեւանգմամբ ամուսնութիւնը սովորական էր նախնա-
կան Սլաւոնների մէջ: Երկար ժամանակ այդ գործադրուում
էր Ռուսաստանում, Լիթովնիայում, Լեհաստանում և Պրու-
սիայի մի քանի մասերուում: Երիտասարդները նախ փախցնում
էին իրենց սիրուհիները և ապա ծնողների հետ բանակցու-

թեան մտնում: Սլաւոնների, Սկանդինավիների, Ֆրանկների
և Գերմանացիների մէջ օրինաւոր ամուսնութիւնն ոչ այլ
ինչ էր, եթէ ոչ աղջկայ վաճառում: Փեսան պէտք է գլխա-
գին (տանձատ) վճարէր, այսինքն հօրից պիտի գնէր սեպհա-
կանութեան իրաւունքը: Սակայն Գերմանացիների մէջ զուտ
և պարզ գնման փոքր առ փոքր փոխարինեց մահրը (douaire):
Փեսան պարտաւոր էր վճարել հարսին օսկիւլում, առաջին
համբուրի զինը, յետոյ մորգէնգաբէ, «առաւոտու նուէր»:
Ուրքան շատախօսութիւն է ծախսուած բանաստեղծական կեր-
պարանք տալու այս թանձրաբարոյ սովորութեան, որի նպա-
տակն էր հատուցանել աղջկան իւր անձի զինը: Բայց նոյն ազգի
նշանադրութեան հանդէսն աւելի իմաստալից է և մի տե-
սակ բարոյական ազնութիւնն է յայտնում: Նատ վաղ ժամա-
նակից այս նշանադրութիւնը փեսայի համար մի մեծ գըա-
ւական էր համարւում և առանց լուրջ պատճառի չէր լուծ-
ւում: Նաեւ այս ազգերն առանց դժուարութիւնների և մի-
անգամից չեն հասել եկեղեցու խորհուրդ կազմող միակնու-
թեանը: Կեսարն լիշտում է հին բրիտանացիների մէջ բազմայ-
րութեան դէպքեր: Նախնական Սլաւոններն երկար ժամա-
նակ բազմակին էին և նախ քան քրիստոնէութիւն ընդու-
նելը, նրանց թագաւորներից մին Վլադիմիր, ութ հարիւրից
պակաս հարճ չէր պահում երեք տարբեր տեղերում: Դեռ
այսօր էլ ոռւսաց միրում յաճախ գոյութիւն ունի մի առան-
ձին ազգապիշտ հարճակալութիւն: Գերդաստան գլուխն ինք-
նակամ ամուսնացնում է ութից տասն տարեկան տղաները
23—30 տարեկան աղջիկների հետ, և յետոյ, շատ անգամ,
սիրում հարսին, սպասելով օրինաւոր ամուսնու չափահասու-
թեան:

Եւրոպայի բոլոր վայրենի ժողովրդների մէջ կինն եղել է
ինչ որ էր ամէն տեղ—մի ստացուածք: Սաքսերի, Բուրգու-
նեօնների (Bourguignons), Գերմանացիների և ուրիշների մէջ,
այլի կինը հպատակում էր իւր աւագ որդուն, հէնց որ
սա տասն և հինգ տարեկան էր դառնում. և առանց որդու
համաձայնութեան նա չէր կարող ոչ ամուսնանալ և ոչ

վանք մտնել, հակառակ դէպքում կը զըկուէր իւր ստացուածքից: Աւատական իշխանութեան ժամանակ թագաւորական աւատի բնակչուհին ամուսնանալու համար պիտի ստանար երեք անձի, իւր հօր, աւատական իշխանի և թագաւորի թուլութիւնը: Երբեմն իսկ աւատական իշխանը կարող էր աղջիկը տասերկու տարեկան գառնալիս ստիլել ամուսնանալ իւր, իշխանի, լնտրած մարդու հետ: Վերջապես ինչպէս Գանձն ու Բուեցիուսը հաստատում են, աղջիկը պարտաւոր էր իշխանին իւր անձի ծառայութիւնը, որից և առաջին դիշերի իրաւունքը (droit de marguette), որ վերջերը փոքր ինչ մեղմացել էր մի վարձատրութիւնով:

Հենց որ ամուսնանում էին, կինը գառնում էր ամուսնու ստրուկը, «Ամէն ամուսին կարող է ծեծել իւր կնոջը, երբ սա չի ուզում հնազանդիլ իւր հրամաններին, կամ երբ նա իրեն անիծում է և կամ խափում է, միայն թէ մի քիչ չափաւոր, այնպէս որ չմեռնի»:

Սկանդինաւցիների մէջ, որ ամենից երկար պահել են գերմանական օրէնքները, տպահարզանը թոյլ էր տրուած ամուսնուն, որ իւր հաճուքի համեմատ կարող էր թողնել կնոջը:

Կինն անհաւատարմութեան համար ամէն տեղ խստութեամբ պատժում էր: Գերմանացիները շնացող կնոջ մերկ պտտեցնում էին զիւզում: Կելտական միքանի ժողովրդների մէջ ամուսինն իւր նորածին որդու հարազատութիւնը փորձում էր, նրան մի վահանի վրայ դրած գետը ձգելով: Եթէ ջրասոյզ լինէր, դա տալացոյց էր, որ կինը դրժել է ամուսնական ուխտն և պէտքէ սպանուէր: Դեռ միջին դարերում անհաւատարիմ կնոջն ընդմիշտ փակում էին մի կուսանոցի մէջ, իսկ եթէ ամուսինը ըռնէր նրան շնանտվիս, կարող էր իսկոյն սպանել և եթէ պէտք զգար, կարող էր և որդուն օգնութեան կանչել: Այսպէս էր պահանջում եկեղեցական կանոնագիրքը, որի կազմողները չեն էլ մտածել պատժել անհաւատարիմ ամուսնուն:

Կովկասի Զերքէղների մէջ, որ հաստատապէս պահել են

եւրոպական բազմաթիւ հին սովորոյթներ, Կլապրոտի ժամանակ ամուսնութիւնը միայն միւնոյն գասի մէջ էր թոյլ տրուում. ազնուականն ազնուականի, գեղջուկը գեղջուկի հետ պիտի ամուսնանար: Ամուսինը կարող էր թողնել իւր նոր կնոջը, եթէ սա կոյս չկինէր, և այս գէպքում վերջինիս ծնողները, որոնց սեպհականութիւնն էր նա, կոմ ծախում էին նըրան և կամ սպանում: Միւնոյն կերպ էին վարւում և անհաւատարիմ կնոջ հետ, միայն, յետ ուղարկելուց առաջ, ամուսինը վրէժ էր առնում նրա մազերն ածըլելով և ականջները ճոռթելով: Միշտ և ամէն գէպքում ապահարզանի իրաւունքը պատկանում էր ամուսնուն:

Այս բոլորից անհերքելի կերպով հետեւում է, որ այսօր մարդկութեան յառաջադիմութեան գլուխն անցած սպիտակ ցեղը թէ բարոյական և թէ միւս բոլոր կողմերից շատ թանձրաբարոյ սկիզբն է ունեցել: Տարակոյս չկայ, որ այժմ սպիտակ ցեղի ոչ մի բնիկ ժողովուրդ իսկական վայրենի դրութեան մէջ չի գտնուում, սակայն հազարաւոր և բիւրաւոր տարիների ընթացքում մեր նախահայրերը չեն անցել ալժմեան ստորին ցեղերի բարոյական և հասարակական շրջանից: Ուրեմն չպէտք է շատ յուսահատեցնել սրանց, ոչ էլ շատ դովել մեզ:

Ժառ.

ԱՐԻՄՆՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ.

Ահա թուեցինք, վերջացընք փաստերը: Պարզ է, որ դրանցից շատերն անկապակից, անբաւարար են: Սակայն համառուստ ասենք, թէ ինչ կարելի է դրանցից եզրակացնել:

Քաղաքակըթութեան ստորին շրջանում, ամենանախնական մարդկանց հրոսակների մէջ ամուսնութեան անուան արժանի ոչինչ չկայ: Միայն կարիքի պատահմամբն է որ տեղի է ունենում սերական միութիւն կամ աւելի ճիշտ, զուգաւորութիւն և միայն մի օրէնք է այն կառավարում. աւելի ու-

ԺԵՂԻ ՕՐԵՆՔԸ: Մարդկանց այս հօտերի մէջ ոչ ոք չի նեղում իրեն կամ ողջախոհութեամբ, կամ ամօթխածութեամբ, կամ մարդկութեամբ. սրանք իսկապէս անասուններ են, որոնց մէջ կինը, իւր թուլութեան պատճառով, տիրուում և շահագործուում է: Սրանց մէջ խառնակեցութիւնը քիչ թէ շատ գործադրուում է, բայց շատ անգամ ամենաուժեղ մարդն իրեն է սեպհականացնում մի կամ մի քանի կին՝ կամ փախցնելով նրանց հարևան ժողովրդներից, կամ գնելով ընկերների փախցրածները, և կամ առնելով նրանց իւր ժողովրդի միջից, որովհետեւ նա առիւծ է: Այսպէս՝ կինը դառնալով աւարի առարկայ, առանձնապէս պատկանում է իրեն ձեռք ձգողին. նա մարդունն է ինչպէս նրա շունը, ինչպէս նրա զէնքերը, մարդն իրաւունք ունի նրան ուրիշն զիջանելու, փոխ տալու, ծախելու, ծեծելու, սպանելու, վերջապէս ինչ որ ուզում է անելու: Սա իւր կինն է, այս ըստացական դերանուան ամբողջ իմաստով և առանց նրա թոյլտութեան կնօշը ձեռք տալը, նշանակում է վնասել, ձեռք երկնցնել մարդու սեպհականութեան: Սակայն փախցնելով կնոջ տիրելը գոյութիւն ունի համընտանի խառնակեցութեան հետ և բոլորովին անհիմն է ամուսնութեան զարդացման մի անհրաժեշտ և ընդհանուր շրջան համարել այն:

Քանի որ կինը մի իր, սեպհականութիւն է, շատ մարդիկ կարող են իրենց մէջ բաժանել նրան և բոլորովին չզգուել դրանից, և եթէ սերական յարաբերութեան այս ձեր յարմար և օգտակար է, եթէ որսերից աղքատ կամ ամբերը երկրի մէջ նա կարող է բնակիչների վատ աճման առաջն առնել, ինչպէս օրինակ Տիբետում, այն ժամանակ գործադրում է այն՝ առանց խղճմութեան: Սա դեռ բարոյական մի կողմն էլ ունի, որ է չափաւորել անասնական խառնակեցութիւնը:

Փախցրած կանանց տիրելը շատ հրապուրիչ էր: Այս թշուառ էակները ժողովրդի մէջ ամէն պաշտպանութիւնից զրկուելով, տէրերից դատապարտում էին ամէն ինչ անելու: Սակայն շատ անգամ կնոջ ժողովուրդը լետ էր պահան-

ջում իւր ստացուածքը (կինը), վնասի փոխարէն վնաս էր ու լիս, վլէժ էր առնում: Այս պատճառով շատ շուտով միտք ծագեց օրինաւորելու օտարացեղ առևանգումը և համընտանի առևանգման ժամանակ՝ հատուցում ավու սեպհականատէրերին: Եւ մի խաղաղ պայմանագրութեամբ օրինաւորեցին առևանգումը: Փոքր առ փոքր փախցնելը գառնում է մի ծէս, որ հաստատում է փախցնողի իրաւունքը. սա գոշն է պատերազմից լետով: Սակայն սերական այս միութիւնների մէջ ոչ մի կարգ չի երևում. իւրաքանչիւր փոքրիկ ժողովուրդ իւր հաճուքի համեմատ է վարուել: Մինն եղել է օտարացեղ, միւսն համընտանի. բայց երբ հասարակական պայմանագրութիւն է կալացել, միայն մի տեսակ ամուսնութիւն է սկսել գոյութիւն ունենալ, որ շատ անգամ բազմակնութիւն, երբեմն բազմալրութիւն և շատ հազիւմիսկնութիւն է եղել:

Ի՞նչպէս յառաջացաւ միակնութիւնը: Նախ, սրա պատճառն եղաւ, ընդհանրապէս, անհրաժեշտութիւնը. այնտեղ, ուր կանալք տղամարդկանցից սակաւաթիւ են, շատ կանալք պահելը միայն հարուստ և զօրեղ մարդկանց զուքսը կարող է լինել. երկրորդ պատճառը՝ մրցումը, կանանց կոիւներն են, որովհետեւ ամէն մինն իւր իրաւունքներն է պաշտպանում. վերջապէս ընտանիքի կանոնաւոր կազմակերպութիւնը. յաջորդութիւնն աւելի կանոնաւոր և աւելի ճիշտ էր կատարուում միակնութեան միջոցին: Երկար ժամանակ միակնութիւնը մի օրինաւոր կեղծիք էր ամուսնու համար և գրեթէ ամէն տեղ սրան թոյլատրուած էր օրինաւոր կնոջ կողքին պահել հարճեր, «փոքրիկ կանալք» և շատ անգամ ստրկուհիներ, որովհետեւ ստորին քաղաքակրթութեան շըրջանում նախանձն արգելուած էր կանանց: Կամաց կամաց, մանաւանդ Սրբական ցեղերի մէջ, միակնութիւնն աւելի և աւելի հաստատուեց, սակայն շատ թոյլ կերպով էր արգելուած տղամարդին՝ գրժել ամուսնական դաշինքը. նոյն իսկ կարելի է եղբակացնել, որ դեռ այսօր էլ իսկական, լուրջ միակնութիւնը ծանը է թւում մեծաժամնութեան, մանա-

ւանդ արական սեռին: Բայց և այնպէս՝ ամուսնութեան այս ձեւն Ամերիկայի, Ասիայի, Եւրոպայի ամենաքաղաքակրթուած ազգերի մէջ քիչ թէ շատ ընդունուած լինելով՝ պէտք է մինչև այժմ գոյութիւն ունեցող ամուսնական ձեւերից բարձր համարուի, բայց ոչ ամուսնութեան զարգացման վերջին աստիճանը:

Միակնութեան հաստատուելով՝ կնոջ վիճակը հետզհետէ լուանում է. ստացուածք կազմող իրի գրութիւնից նա բարձրանում է և մարդ է համարում: Երկար ժամանակ նրան պսակում են տոանց նրան խորհուրդ հարցնելու. երբեմն էլ երբ գեռ երեխայ է: Գերդաստանը, ծնողներն են պայմանաւորւում, սկզբում ընծաների, յետով, երբ սկսւում է դրամի գործածութիւնը, մի գումարի հետ նրան փոխելու: Սակայն փոքր առ փոքր կինը մի որոշ անկախութիւն է ձեռք բերում: Երբեմն փեսացուն տալիս է հենց իրեն իւր արժէքը, երբեմն ծնողներն են շնորհում նրան մի օժիտ, որ նրա սեպհականութիւնն է մնում: Սեպհականատիրութեան պատուին արժանանալով՝ կինն անհամեմատ աւելի յարգուեցաւ, մնալով հանդերձ քիչ թէ շատ խիստ հպատակութեան տակ: Երկար ժամանակ նրան արձակում էին իրենց հաճուքի համեմատ և կամ ամենաչնչն պատճառով: Միշտ նրա անհաւատարմութիւնը և համարեա միշտ միայն նրանը, խստութեամբ պատժում էր: Եւրոպական ամուսնութեան մէջ, ուր բարբարոսական և աւատական սովորութիւնները, նախնի Հռոմի օրինական աւանդութիւններն և քրիստոնէական զաղափարները թերի համաձայնութեան են հասել, կինն այլ ևս ոչ ստրուկ և ոչ աղախին է. նա միայն կրտսեր է և օրէնքն նրան ամուսնական կտակ այնպէս է միացնում, որ միայն մահը կարող է բաժանել, գոնէ կաթոլիկ երկրներից շատերում:

Բայց միթէ միշտ այսպէս պիտի լինի: Պարզ է որ ոչ Հաստակութիւնների զարգացումը վերջ չունի: Արդէն օրինաւոր ապահարզանը, որ ընդունուած կամ ընդունուելու վրայ է Եւրոպական զանազան երկրներում, տալալեց միակին անլուծանելի ամուսնութեան կեղծիքը:

Արդէն տեսանք, որ ամուսնական ոչ մի ձեւ բացարձակապէս անհրաժեշտ չէ և բազմաթիւ ձեւեր փորձի են գրուել: Հաւանականօրէն նոր ձեւեր ևս կը հնարուեն, որոնց ուղղութիւնը կը կայանայ հասարակական ամենամեծ օգտի մէջ: Այդ օգտակարութիւնն այնչափ տարբեր հասարակութիւնների կազմակերպութեան համեմատ փոփոխուում է: Այստեղ, ուր տէրութիւնը յանձն չի առնիլ երեխաների հոգատարութիւնը, մի խիստ միակնութիւն անհրաժեշտ կը լինի. գերդաստանը պէտք է հիմնովին կազմակերպուի, որովհետեւ միայն նրա գրկում պէտք է նոր սերունդներն ապաստանարան, պաշտպանութիւն և դաստիարակութիւն գտնեն:

Այստեղ, ուր, ընդհակառակը, անհատական շահերն աւելի և աւելի կը համերաշխեն, տէրութիւնն աստիճանաբար կը հակուի փոխանակելու գերդաստան, իւր ապագայ քաղաքացիներն մեծացնելու համար: Փոքր առ փոքր հասարակութիւնը կ'սկսի այնչափ հոգս չտանել ամուսնութիւնը կարգաւորելու, որքան նոր սերունդը կազմակերպելու, երեխաների հոգսը նրա համար էական հարց կը դառնայ. իսկ սերական միութիւնները հետզհետէ կ'սկսեն անձնական կեանքի գործ համարուիլ: Մեծացնել և լաւ մեծացնել երեխաները, ահա թէ ինչու կը յանկի հասարակութիւնը, և աւելի ու աւելի կ'ստանձնէ այս անհրաժեշտ գործը, այն ժամանակ ոչ մի հիմունք չի լինիլ ամուսնական դաշինքներին մի մեծ ընդարձակութիւն չտալու. ցանկացողներն կը կարողանան իրենց կամքովը այն կապելու, ինչպէս միւս դաշինքները, պահպանուի միմիայն, մի քանի, փորձով նուիրագործուած շատ ընդհանուր կանոններ:

Թող ի զուր չփորձեն գովելու «գերդաստան սրբարանը»: Պէտք է կուսակցական ոգւով կուրանալ, որ չտեսնեն թէ ինչ է այս սրբարանը գերդաստանները մեծամասնութեան մէջ, և որքան երեխաներ շատ անգամ տանջուած են այստեղ հոգւով և մարմնով: Հետեւապէս մարդ իրաւունք ունի հաւատալու, և. Սպենսերի կարծիքի հակառակ, որ գոնէ մի քանի հասարակութիւնների մէջ, գերդաստան դերը հետզհետէ և անընդ-

Հատ պիտի փոքրանալ: Թէ ինչպէս պիտի կատարուի այս խորին ձևավոխութիւնը հասարակական օրգանիզմի մէջ, չի կարելի նախազուշակել և կամ պարզօրէն à priori նշանակել: Հասարակական զարգացումը դանդաղութեամբ է առաջ գընում: Որպէսզի մի տէրութիւն ալնքան միջոցներ ունենալ, որ կարողանալ կատարել մեր ենթադրած դրութեան նրա վըրայ դրած պարտականութիւնը, պէտք է, որ անհատական սեպհականութիւնը մեծ մասամբ արդիւնառութիւն (ասորի այ) դառնալ, իսկ սրա համար պէտք է, որ ալտրիւզմը գերակշռէ եսականութիւնը և որ բարոյականութիւնը սաստիկ բարձրացած լինի: Իսկ սա, հաստատապէս, մի օրուայ գործ չէ: Սակայն պրոգրեսը ճակատագրական է, որովհետև բոլոր հասարակութիւնները զարգացող օրգանիզմներ են, որոնց մըցումն անդադար մղում է լաւագոյնը գտնելու:



ՄԵՐԴԱՅՆԻՒԹԵՆ ԳՐԱԴՐԱՆ

- 1) Հետուրնօ. Ամուսնութեան զարգացումն.
- 2) Կանեստրինի. Մարդաբանութիւն.
- 3) Պողողա. Նորագոյն տեսութիւններ—գերդաստան,
հասարակութեան և պետութեան ծագման մտաին.
(Փրանսերէնից, մամուլի տակ է):

2013

22197



